

Ա. ՂԱՆԱԿՆՅԱՆ

ՀԱՅ

ԺՈՂՈՎՐԻՒ

ՀԵՐՈՍԱՂԱՏՅՈՒՄՆԵՐԸ



ՀԱՅԳԵՏՀԵՅՑ

1942



891.99.09

Ղ - 36

✓

Լրաց.

398 (47.825)


Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՄԱՐԿԱՆ Է 1961

A  $\frac{I}{6344}$

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԵՊԵՏՈՒՄՆԵՐԸ

4672



ՀԱՅՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏ  
ԵՐԵՎԱՆ - 1942

«ՍԻՐԵԼ ԻՐ ՄԵԾ, ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔԸ—ՆՇԱՆԱԿՈՒՄ Է  
ԳԻՏԵՆԱԼ ՆՐԱՆ, ՀԵՏԱՔՐՔՐՎԵԼ ՆՐԱ ԱՆՅՅԱԼՈՎ, ՊԱՐԾԵՆԱԼ  
ՆՐԱ ՊԱՅԾԱՌ, ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷԶԵՐՈՎ ԵՎ ԱՏԵԼ ՆՐԱՆ ՃՆՇՈՂ-  
ՆԵՐԻՆ, ՏԱՆՋՈՂՆԵՐԻՆ»:

(«ՊՐԹՎ.Դ.Ս.»)



## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմութիւնը հարուստ է ազատագրական, պաշտպանական պատերազմներով: Ընկած լինելով արեւմտյան և արևելյան աշխարհակալ խոշոր պետութիւններէ (Ասորեստան, Հռոմ, Բյուզանդիա, Պարսկաստան) քառուղիում, և պարբերաբար ենթակա լինելով այդ պետութիւններէ նվաճողական արշավանքներին, ազատատենչ ու հերոսական Հայ ժողովուրդը՝ իր լավազույն գալակներէ առաջնորդութեամբ, բազմիցս, ոգի ի բռին, մահու ու կենաց մարտի է ելել իր ախոյաններէ դեմ, պատվով պաշտպանելով սեփական ազատութիւնն ու անկախութիւնը, վանել է նրանց իր սրբազան հայրենիքի սահմաններից:

Ազատագրական այդ պատերազմներին, և

դրանց մատնակից՝ քաջարի մարտիկների ու զորավարների կյանքի ու սիրությունների նկարագրին, քիչ հայրենաշունչ էջեր չեն նվիրել մեր հին ու նոր, հայրենաբազմ ու տաղանդավոր մատենագիրներն ու դրողները՝ Փալստոսը, Խորենացին, Եղիշեն, Շնորհալին, Լաստիվերացին, Աբովյանը, Բաֆֆին, Մուրացանը և ուրիշները :

Նույն այդ պատերազմները իրենց հերոսներով կարևոր տեղ են դրավել նաև հայկական հարուստ բանահյուսության մեջ : Աշխատավոր ժողովրդի՝ շինական ու աամիկ խավերի ծոցից դուրս եկած բազմաթիվ անանուն գուսաններ ու վիպասաններ իրենց ստեղծած առասպելներում ու զրույցներում, վեպերում ու վիպերգերում, ավանդություններում ու երգերում սիրով ու սրտով պատմել ու երգել են այդ պատերազմներին ու դրանց հերոսների մասին :

Իբրև բուն ժողովրդական, բանավոր խոսքի կենդանի հուշարձաններ, հայ ժողովրդի առասպելներն ու զրույցները, վեպերն ու երգերը ցուլացնում են իրենց մեջ այն գաղափարները, ոգին ու շունչը, որոնցով անգործված է եղել մեր ժողովուրդը օտարերկրյա նվաճողների դեմ իր

մղած ազատագրական, պաշտպանական պատե-  
րագմների օրերին :

Այդ հերոսապատումների մեջ կենդանի ու  
խոսուն կերպով դրսեվորված են՝ մի կողմից  
օտարերկրյա նվաճողների ոսպամոլ ու բռնա-  
կալ, խորամանկ ու նենգ, դավադիր ու ստոր,  
վախկոտ ու փոքրուզի տիպերը, մյուս կողմից,  
դրանց դեմ ազատագրական մարտեր մղող՝ հայ  
գորավարների ու զինվորների անձնազոհ ու հե-  
րոսական, ազատատենչ ու հայրենասեր, խաղաղ  
ու աշխատասեր, խիզախ ու աշնիվ կերպար-  
ները :

Իբր գոյության հնագույն շրջանից սկսած,  
հազարամյակներ ու դարեր շարունակ, հայ ժո-  
ղովուրդը՝ իր հարուստ ու հին բանահյուսու-  
թյան մեջ, մեկը մյուսին հաջորդող տասնյակ  
ու հարյուրավոր դյուցազնազարմ հերոսների մի-  
ջոցով, արտահայտել է հայրենիքի պաշտպա-  
նության, հայրենադավ ոսոխների բնաջնջման,  
անկախ ու ազատ կյանքով ապրելու և խաղաղ  
ու ստեղծագործ աշխատանքով պարապելու իր  
նվիրական դադավարները :

Տեսնենք այդ՝ մի քանի բնորոշ օրինակներ  
բով:

## ՀԱՅԿԻ ԵՎ ԲԵԼԻ ԱՌԱՄՊԵԼԸ

«ՄԱՆ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»  
Ժող. ասացվածք

Հայ ժողովրդի մղած ազատագրական մար-  
տերի բանահյուսական առաջին արձագանքը հան-  
դիսանում է Հայկի և Բելի առասպելը\*):

Առասպելի համառոտ բովանդակութունը  
հետևյալն է:

Չկամենալով ենթարկվել ասորեստանյան  
բռնակալ հսկա Բելի իշխանությանը, հայոց  
նախնի, դյուցազն Հայկը թողնում է Բաբելոնը

---

\*) Առասպելի հիմնական բնագիրը պահպանվել է Մ.  
Խորենացու Հայոց Պատմության մեջ: Մի ուրիշ տար-  
բերակ գտնում ենք Սեբեոսի մոտ: Գոյութունն աչեն մի  
քանի այլ բուն ժողովրդական պատումներ էլ, որոնք  
ժողովրդի բերանից 19-րդ դարի վերջերին դրի են առել  
մեր բանահավաքները (Գարեգին Սրվանձատյան և այլն):

և իրեն ժողովրդով զալիս, բնակութիւնն է հաստատում Արարատյան երկրում: Լսելով այդ մասին, Բելլը պատգամավոր է ուղարկում նրա մոտ, առաջարկելով՝ վերադառնալ և հնազանդվել իրեն: Հայկը կտրականապես մերժում է Բելլի առաջարկը: Ուժով նրան հնազանդեցնելու դիտավորութեամբ, Բելլը պատերազմի է դուրս գալիս Հայկի դեմ, և... չարաչար պարտվում մարտի դաշտում\*):

Առասպելի պատմական ստաղծն է կազմում Հայաստանի նախարնիկ խալդական ժողովրդի մղած երկարատև ու համառ պայքարը՝ հզոր ու աշխարհակալ Ասորեստանի դեմ: Խալդերի նյութական և հոգևոր կուլտուրայի մի շարք այլ հուշարձանների հետ, Հայկի և Բելլի առասպելը անցել է նրանց (խալդերի) անմիջական ժառանգորդ հայ ժողովրդին, և յուրացվել, ազգայնացվել վերջինիս կողմից: Սեփականելով հին խալդական առասպելը, մեր նախնիները մարմնավորել են նրա մեջ իրենց հույզերն ու մտորում-

---

\*) Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Ա., գլուխ Ժ և ԺԱ.

ները, արտահայտել իրենց պայքարն ու ակընչ-  
կացութիւնները — հայ ժողովրդի դոյութեան  
իրավունքը և այդ իրավունքը զենքով պաշտպա-  
նելու գաղափարը :

Վ Հայկի և Բելի առասպելի հիմնական ու էա-  
կան թեման պաշտպանականն է՝ ընդդէմ արտա-  
քին թշնամու՝ հանուն սեփական ժողովրդի ան-  
կախութեան : Առաջնակարգ գաղափարը, որով  
տողորված է և շնչում է ողջ առասպելը, դա  
ազատասիրութիւնն է, ազատ ու անկախ ապրե-  
լու ձգտումը : Այդ գաղափարի կենդանի մար-  
մնավորումն է առասպելի զլխավոր հերոս՝ Հայկ  
դյուցազնը :

Առասպելաշէն ժողովուրդը հենց սկզբից ազ-  
դարարում է ուրիշների ազատութեան վրա  
բռնացողների դէմ իր հերոսի մեջ եղած բուն  
ատելութիւնն ու անհանդուրժողականութիւնը :  
«Սա հսկաների մեջ քաջ և երևելի լինելով, ըն-  
դիմանում էր այն ամենքին, ովքեր ձեռք էին  
բարձրացնում հսկաների և դյուցազուհիների վրա,  
տիրապետելու համար» :

Հասկանալի է միանգամայն, որ Հայկը եր-  
բեք չպիտի հանդուրժեր սեփական ժողովրդի

անկախութեան դեմ եղած ոտնձգութիւնները :  
Եվ իրօք : Առասպելի շարունակութեան մեջ  
պատմւում է , որ նա չկամենալով հնազանդվել  
Բելին , իր ազգակիցներով ու տոհմակիցներով  
հեռանում է նրա իշխանութեան սահմաններից  
դեպի Արարատեան երկիրը , և բնակութիւն  
հաստատում այնտեղ : Հայտնի է նաև Հայկի  
տված հանդուզն ու վճռական մերժողականը  
Բելի առաջարկած հնազանդութեան ու հպատա-  
կութեան պայմանին :

Ազատասիրութեան հետ մեկտեղ , Հայկը ,  
իրբև իսկական ժողովրդական հերոս , օժտված  
է նաև մեծ անձնազոհութեամբ ու քաջութեամբ :  
Այլ կերպ չէր էլ կարող լինել : Ազատ ու անկախ  
ապրելու համար անհրաժեշտ է անձնազոհ և  
քաջ լինել : Հայկի սրբազան նշանաբանն է «մահ  
կամ ազատութիւն» սկզբունքը : Այս տեսակե-  
տից բնորոշ է նրա հետևյալ մարտական հրա-  
ման-պատվերը՝ ուղղված իր քաջերին . «Երբ  
մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ , աշխա-  
տենք հասնել այն տեղին , ուր կանգնած է Բելը  
քաջերի բազմութեան մեջ . որ՝ կամ մեռնենք և  
մեր բոլոր զերդաստանը Բելի ծառայութեան

տակ մտնի, կամ ցույց տալով մեր մատների  
հաջողութիւնը նրա վրա, ցրենք նրա ամբօխը  
և հաղթութիւնն ստանանք» : Հավատարիմ իր  
հերոսական սկզբունքներին, Հայկն անձամբ,  
կռվի ամենավճռական վայրկյանին, ցույց է  
տալիս քաջութիւնն ու անձնագոհութիւնն ամենա-  
փայլուն օրինակը :

Պատերազմի ժամանակ մարտիկի հոգեկան  
հատկութիւնների հետ վճռական դեր են խա-  
ղում նրա ուղղմական ունակութիւնները, մար-  
տը վարելու նրա շնորհքը : Քաջ գիտակցելով  
այդ, ժողովրդական վիպասանները իրենց հերո-  
սին օժտել են նաև այդ հատկութիւններով :  
Հայկը ոչ միայն ազատասեր, անձնագոհ ու քաջ  
կռվող է, այլև տաղանդավոր ու խելացի զորա-  
վար : Նա լավ ճանաչում է թշնամուն : Պատե-  
րազմի ժամանակ նախաձեռնող է, իր գործո-  
ղութիւնների մեջ կտրուկ ու վճռական... Թըշ-  
նամու առաջխաղացման լուրն առնելուն պես  
Հայկը, առանց ժամանակ կորցնելու, համախըմ-  
բում է շուրջը իր քաջերին : «Այստեղ ուշիմ և  
խոհեմ հսկան... արադությամբ հավաքում է իր  
որդիներին և թոռներին, աղեղնավոր մարդ-

կանց, որ շատ փոքր էին թվով, և ուրիշ յուր  
ձևով տակ եղածներին...»: Ռազմական տեսա-  
կետից երկրորդ կարևոր քայլը, որ անում է  
նա, դա թշնամուն կանխելն է: Հայկը չի սպա-  
սում, որ Բելը մտնի իր հողը, այլ զորքով ա-  
ռաջ է շարժվում նրան իր երկրի սահմաններից  
դուրս զիմափորելու համար, և բանակ է դնում  
մի բարձր տեղում, որպեսզի դեռ հեռվից կարո-  
ղանա նկատել իր ախոյանին: Իբրև հմուտ զո-  
րավար, Հայկը հատուկ ուշադրություն է դարձ-  
նում իր զինվորների դասավորության վրա՝ քիչ  
մարդկանցով մեծ արդյունքի հասնելու նպատա-  
կով: Դիտանոցից թշնամուն լավ ուսումնասի-  
րույց հետո, նա «Կանգնեցնում է աջ կողմում  
Արմենակին երկու եղբայրներով, ձախ կողմում  
Կաղմոսին և յուր որդիներից երկուսին, որով-  
հետև նրանք աղեղ և սուսեր զործածելու մեջ  
փորձառու էին: Ինքը կանգնում է սկզբից և  
մնացած զորքը տանում է յուր ետևից եռան-  
կյունու ձևով, և այսպես հանդարտ շարժվում  
է առաջ»: Զորականի իր փայլուն ընդունակու-  
թյունները Հայկը լի ու լի դործադրում է կովի  
ժամանակ: Մարտի ամենավճռական վայրկյա-

նին, նկատելով Բելլին պաշարած սարսափն ու վարանումը, նա անհասկաղ օգտագործում է առիթը և անձամբ ճակատադրական հարված հասցնում թշնամուն: «Այսպիսի անակնուկնելի դիպված տեսնելով, Տիտանյան արքան զարհուրում է տարակուսանքի մեջ, և ետ քաշվելով՝ վերադառնում է նույն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբանալ իր ամբոխի մեջ, մինչև կը հասներ ամբողջ դորքը, որպեսզի մյուս անգամ սկսեր կռվել: Աղեղնավոր Հայկը, խմանալով այս, իրեն առաջ է ձգում, մոտենում է արքային և պինդ քաշելով լայնալիճ աղեղը, դիպցնում է իր երեքթևյանը Բելլի կրծքի տախտակին, և սլաքը թափանցելով անցնում է նրա թիկունքի միջով ու ընկնում է դետին: Այսպես կործանվում է հպարտ Տիտանյանը և վայր ընկած փչում է հողին»:

Մերած հերոսի կերպարն ըստ ամենայնի կատարյալ դարձնելու համար ժողովուրդն օժտել է Հայկին նաև բարոյական և Ֆիզիքական մի շարք այլ բարեմասնություններով: Այսպես, ըստ առասպելի, Հայկը «ուշիմ» է, «խոհեմ»,

«բարի անձամբ»: Նա «զեղապատշաճ» է և «անձ-  
նեա», «քաջագանգուր», «խայտակն» և այլն:

Հայկի կատարյալ հակապատկերն է Բելը: ✓  
Նրա բարոյական դիմանկարի առաջին և հիմնա-  
կան դիժը բռնությունն է: Ուժով իրեն կամքը  
ուրիշներին թելադրելը, գոռով նրանց ազատու-  
թյունից զրկելը՝ Բելի էության գլխավոր  
տարերքն է, նրա գործունեության շարժիչ ուժը:  
Առասպելի հենց սկզբից պատմվում է, թե ինչ-  
պես օգտադործելով հարմար առիթը՝ Բելը իր  
բռնակալական տիրապետությունն է հաստատում  
երկրի երեսին: Նա ոչ մի կերպ չի կարողանում  
հանդուրժել, որպեսզի Հայկը ազատ ու ինքնիշ-  
խան ապրի իր հայրենիքում: Մարդ ուղարկելով  
վերջինիս մոտ, Բելը պահանջում է Հայկից՝  
դալ և հնազանդվել իրեն, ասելով. «Դու բնա-  
կեցիր սառնամանիքի ցրտում, արի տաքացրու  
և մեղմացրու քո սառած հպարտ բարքի ցրտու-  
թյունը և, հնազանդելով ինձ, ապրիր և բնակիր  
հանդարտությամբ»: Իբրև բռնակալ Բելը գոռոզ  
է ու ամբարտաժան: «Մա ինքն իրան ավելի  
բարձր էր համարում, քան ամբողջ մարդկային  
ազլը. իր բնությունը չճանաչելով, ամբողջ

մարդկային ազգը իրեն էր ծառայեցնում: Հպարտացած և ամբարտաճանացած այն աստիճան, որ կանգնեցրեց իր պատկերը, երկրպագել էր տալիս իրեն իբրև ասածու և զոհեր մատուցել»: Իբրև գյուցաղն և հսկա, Բեյը, Հայկի նման, օժտված է Ֆիզիքական մեծ ուժով՝ «հորը դուրսըթյամբ»: Ստեփան, չնայած իր ուժին, նա զուրկ է հերոսությունից ու խիզախությունից, թչնամու գիմագրական գորությունը անհնելով՝ գարհուրում է ու հետ քաշվում: Հակառակ Հայկին, որը կովի ժամանակ քաջության անձնական օրինակով գոտեպնդում է և առաջ վարում իր սակավաթիվ մարտիկներին, Բեյը ամբողջ հույսը դնում է իր ղեկավարի և «բաղմամբոխ», «լեռնագեղ» ու «խուլ» հսկաների վրա, խուսափելով ճակատ-ճակատի կռվի ելնել Հայկի հետ: V Բացասական ու վանողական է Բեյի ոչ միայն ներքինը, այլև արտաքինը: Նա չունի Հայկի գեղեցկությունն ու զրավչությունը. «հաստավիզ» է ու «հաստամարմին», կատարյալ «մի մսեղեն արձան»:

Հայկի և Բեյի առասպելը հայ բանահյուսության առաջին հանճարեղ ստեղծագործու-

Թյունն է : Նրանից են սկիզբ առնում այդ բանահայտութեան բովանդակութեան և արվեստի լավագույն արտադրիչները : Առասպելի մեջ հայ ժողովուրդը առաջին անգամ մարմնավորել է իրեն նվիրական իդեալները ազատ կյանքի ու անկախ հայրենիքի մասին, դեղարվեստորեն վերարտադրել իր հերոսական նախնիների՝ օտարերկրյա նվաճողների դեմ մղած առաջին ազատագրական մենամարտը :

Ժողովրդական ավանդութեամբ Հայաստան երկիրը և հայ ժողովուրդը իրենց սկիզբն ու առաջնը սերում են՝ մեր ազգի անկախութեան և հայրենիքի պաշտպանութեան համար մարտնչող, առաջին ազատատենչ հերոսից՝ դյուցազն Հայկից :

Իմաստուն ավանդություն :



## ԱՐՏԱԶԵՍԻ ՎԵՊՈՐ

«Ի ԲՐԵՎ ԶՍԷԳՆ ՏՐԴԱՏ, ՈՐ ՍԻԳԱԼՈՎՆ  
ԱԻԵՐԵԱՅ ԶԹՈՒՄԲՍ ԳԵՏՈՅ ԵՎ ՅԱՄԱՔԵ-  
ՑՈՑՑ, ԻՍԿ Ի ՍԻԳԱԼՆ ԻԻՐՈՒՄ ԶՑՈՐՁԱՆՍ  
ՇՈՎՈՒՑ»:

ժող. ասացվածք

Պաշտպանական, ազատագրական կռիւլների  
և դրանց հերոսների մասին հայ ժողովրդի հո-  
րինած բանավոր ստեղծագործությունների շար-  
քում, Հայկի և Բեկի առասպելից հետո, ժամա-  
նակագրական կարգով երկրորդ ուշագրավ գոր-  
ծը՝ Արտաշեսի վեպն է\*):

---

\*) Վեպի հիմնական բնագիրը, բառացի և ոչ բառա-  
ցի հատվածների ձևով, պահպանվել է Մ. Խորենացու  
Հայոց պատմության մեջ: Առանձին մասերի տարրերակ-  
ներն ու բեկորները մնացել են նաև մի քանի այլ գրա-  
կան հուշարձաններում: Այսպես, օրինակ, Արտաշեսի  
կյանքի վերջին բուպեներին վերաբերող վիպական-բանա-  
ստեղծական մի պատառիկ բերված է Գրիգոր Մազիսա-  
րոսի Թղթերից մեկում. շղթայված Արտավազդի պատ-  
մության վարիանտները կան՝ Եզնիկ Կողբացու, Վարդան  
վարդապետի մոտ, և այլն:

Վեպի համառոտ բովանդակութիւնը հետեւյալն է:

Որսի ժամանակ հանկարծակի պանվում է հայոց Սանատրուկ թագավորը: Ապօրինի ճանապարհով թագավոր է դառնում ոմն Երվանդ՝ օտար յեզից: Իր իշխանութիւնն ապահովելու համար նա սպանել է տալիս Սանատրուկի որդիներին: Փրկվում է միայն Արտաշես արքայորդին, որին նրա ստնտուն փախցնելով՝ պատսպարում է Հեր գավառի հովիական վրաններում: Եռուով Արտաշեսի մոտ է գալիս նաև նրա դայակ՝ Սմբատ Բազրատունին, և ծպտած ապրելով հովիվների ու նախրապանների մեջ՝ խնամում է սիրելի սանիկին: Չափահաս դառնալով՝ Արտաշեսը Սմբատի հետ, պարթևական զորքով գալիս է Հայաստան: Սպանելով Երվանդին՝ Արտաշեսը տեր է դառնում հայրենական գահին, հիմնում Արտաշատ քաղաքը:

Այսնները՝ միաբանած լեռնականների հետ՝ 19վում են Հայաստան—կողոպուտի և ասպատակութեան: Արտաշեսը զորքով դուրս է գալիս նրանց դեմ: Կռվի ժամանակ հայերը նեղում են արևմտներին և դերում նրանց թագավորի որդուն:

A  
I  
6344



Ալանները հաշտություն են խնդրում, խոստա-  
նալով այլևս չհարձակվել Հայաստանի վրա:  
Արտաշեսը մերժում է նրանց խնդիրքը: Գալիս  
է գերիի քույրը՝ գեղաշյա Սաթենիկը և, թարգ-  
մանի միջոցով, խնդրում Արտաշեսին վերա-  
դարձնել իր եղբորը, պատճառաբանելով, որ  
դյուցազուհիներին վայել չէ բռնանալ ուրիշ ազգի  
դյուցազուհիների ազատության վրա: Սաթենիկի  
գեղեցիկ արտաքինն ու իմաստուն խոսքերը կա-  
խարդում են Արտաշեսի սիրտը: Նա խնամախոս է  
ուղարկում ալանաց թագավորին: Վերջինս մեծ  
փրկանք է պահանջում: Արտաշեսը նստում է իր  
սև ձին և անցնելով Կուր գետը, որի մյուս ա-  
փին բանակ էին դրել ալանները, առևանգում է  
Սաթենիկին: Տեղի է ունենում Արտաշեսի և Սա-  
թենիկի հարսանեկան հանդեսը: Շուտով Արտա-  
շեսից և Սաթենիկից ծնվում է առաջին արու-  
զավակը, որին Արտավազդ անունն են տալիս:

Վիշապազուհիները դողանում են մանուկ  
Արտավազդին և տեղը դե դնում: Մեծանալով  
Արտավազդը դառնում է չար և ինքնահավան:  
Նա նախանձում է վիշապազուհիների իշխան՝  
Արզավանի փառքին, խլում նրանից թագավորի

երկրորդութիւնը, զրպարտելով այրել սալիս  
նրա պալատը, խլում նրանից Նախիջևանը,  
կոտորում բոլոր վիշապազուններին, և ի վերջո  
նաև իրեն՝ Արգամանին:

Յգտվելով արևմուտքում տիրող իրարանցու-  
մից, Արտաշէսը դադարում է հարկ վճարել  
Հոմին: Հոմեական կայսրը, Դոմետիանոս  
Կորբուլոն զորավարի գլխավորութեամբ մեծ  
զորք է ուղարկում Հայաստան՝ Արտաշէսի դեմ:  
Սկսվում է ահեղ ճակատամարտը: Կովի սկզբում  
հոմեացիներին հաջողվում է նեղել հայերին:  
Սակայն պատերազմի վերջում վրա է հասնում  
Սմբատն իր գորքով, և պարտութեան մատնելով  
հոմալեցիներին՝ քշում է նրանց մինչև իրենց  
երկրի սահմանները: Պատերազմը վերջանալուն  
պես Արտաշէսը նորից ձեռնամուխ է լինում շի-  
նարար գործունեութեան, հատուկ ուշադրու-  
թիւն է դարձնում գիտութեան և արվեստների  
զարգացմանը:

Ժամանակ անց, օտարութեան մեջ եղած մի-  
ջսցին, հանկարծ, ծանր հիվանդանալով, մեռ-  
նում է Արտաշէսը: Մտերիմներից ու հավատա-  
լիմներից շատերը ինքնասպան են լինում նրա

դերեղմանի վրա : Տեսնելով այդ՝ Արտավազը  
սրտնեղում է և ասում հորը, որ նա մեռնելով  
իր հետ է տանում ամբողջ երկիրը, թողնելով  
իրեն ավերակների վրա թաղալոր : Սրա համար  
Արտաշեսը դերեղմանից անիծում է Արտավազ-  
դին՝ Մասսի վրա որսի ղնալիս շղթայվել քաջ-  
քերի կողմից : Այդպես էլ լինում է : Շուտով որ-  
սի ժամանակ քաջքերը բանտարկում են Արտա-  
վազդին լեռան վիհերից մեկում : Երկու շուն  
չարունակ կրծում են նրա շղթաները . Արտա-  
վազը աշխատում է դուրս գալ և վերջ տալ աշ-  
խարհին, սակայն դարբինների կռահահարու-  
թյունից զորանում են նրա կապանքները<sup>\*)</sup> :

Արտաշեսի վեպի մեջ արձագանք են դուել  
հայ էթնոսի կազմավորման և հայ պետականու-  
թյան հիմնադրման առաջին շրջանի հասարակա-  
տնտեսական և օազմա-քաղաքական կարևոր ի-  
րադարձությունները : Վեպի պատմական առաղ-  
ձը կազմում են հայոց Արտաշես Ա., Արտաշես

---

<sup>\*)</sup> Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Բ.,  
գլուխ 12—14 :

Բ. և Տրդատ Ա. թագավորների կյանքի ու դոր-  
ծունեութեան կարևոր դրվագները:

Հայտնի է, որ հայերն ունեցել են Արտաշես  
անունով մի քանի թագավորներ: Դրանցից մեկը  
(Արտաշես Ա.) պատմութեան մեջ հանդես է դա-  
լիս իրրև հայկական անկախ իշխանութեան հիմ-  
նադիր (189 մ. թ. ա.), Արտաշատ քաղաքի  
կառուցող, Ժողովրդին սիրելի, շինարար մի  
թագավոր: Մյուսը՝ (Արտաշես Բ.) հիշվում է  
իրրև հռոմայեցիների (Անտոնիոս) կողմից տակն  
ու վրա արված հայկական իշխանութեան վերա-  
հաստատող (սա այն Արտաշեսն է, որ ազատվե-  
լով Անտոնիոսի ձեռքից՝ ապաստանում է պար-  
թևների մոտ, և հետո, պարթևական զորքով  
զալիս է Հայաստան ու մարերի դեմ կռվելով՝  
հետ է ստանում հոր գահը):

Արտաշեսի վեպի առաջին մասում մեկ Ար-  
տաշեսի անունով վերարտադրված է վերոհիշյալ  
երկու պատմական Արտաշեսների կյանքն ու  
գործը: Ժողովրդական-վիպական ստեղծագոր-  
ծություններին հատուկ մի երևույթ է դա, երբ  
երկու տարբեր պատմական անձինք, որոնք ջոկ-  
ջոկ և տարբեր ժամանակ բանահյուսութեան

նյութ են դարձել՝ անուանների նմանության հե-  
տևանքով միաձուլվում են իրար: Պատմական  
ատաղձ ունի նաև Արտաշեսի վեպի երկրորդ  
մասը: Միևնույն հերոսի (Արտաշես) վրա այս-  
տեղ պատմված են հայոց Տրդատ Ա. թագավորի  
կյանքի հետ կապված մի քանի անցուղարձեր,  
նրա կռիվները հռոմայեցիների (Դոմետիանոս  
կորբուլոն) հետ, կործանված Արտաշատի վերա-  
շինումը, կռիվը ալանների դեմ (72 մ. թ. ա.),  
խնամությունը նրանց հետ և այլն: Եթե Արտա-  
շես Ա.-ի և Բ.-ի համակցումը վեպի մեջ տեղի  
էր ունեցել նրանց անուանների նմանության պատ-  
ճառով, ապա Տրդատը միացել է Արտաշեսի վե-  
պին, որովհետև նրա արարքները (կռիվը հռո-  
մայեցիների դեմ, Արտաշատի վերաշինումը)  
հիշեցրել են Արտաշես Ա.-ի և Բ.-ի կատարած  
դորձերը: Պատմական վերոհիշյալ Փոնի վրա  
Արտաշեսի վեպի մեջ վիպականորեն դրսևորված  
են օտարերկրյա նվաճողների դեմ II և I դարե-  
րում (մ. թ. առաջ) հայ ժողովրդի մղած  
պաշտպանական, ազատագրական պատերազմնե-  
րը և այդ պատերազմների զլխավոր հերոսնե-  
րը: Վեպն սկսվում է ապօրինի ճանապարհով

Հայաստանի թաղալոր դարձած ոմն Երվանդի  
դեմ երկրի օրինական թաղաժառանգի ընդվզ-  
մամբ և պատերազմի դաշտում իրեն ոսոխի  
դեմ նրա տարած վայլուն հաղթանակով: Այնու-  
հետև պատմվում է կողոպուտի ու ասպատակու-  
թյան նպատակով Հայաստան եկած ալանական  
հորդանների դեմ հայոց զորքերի մղած հերոսա-  
կան ճակատամարտի մասին: Վեպը վերջանում  
է՝ Հայաստանն ընկճելու և հպատակ, հարկա-  
տու երկիր դարձնելու մտադրությամբ Հոռոմի  
կողմից ուղարկված բանակների դեմ հայերի  
կազմակերպած ուղղմական կորովի դիմադրու-  
թյամբ:

Հիշյալ պատերազմների կազմակերպողն ու  
ուզին՝ դրա հետ նաև վեպի գլխավոր հերոսը Ար-  
տաշեսն է՝ առաջին հայ զորավար-թագավորը:  
Նրա անձնավորության մեջ մեր վիպասանները  
մարմնավորել են իրենց ժողովրդի լավագույն  
հատկությունները, նրա նվիրական ձգտումներն  
ու տենչերը: Ըստ վեպի՝

Արտաշեսը մեծ հայրենասեր է: Նրա համար  
ամեն ինչից բարձր է հայրենիքի անկախու-  
թյունն ու պատիվը: Յուրաքանչյուր անդամ,

երբ թշնամին ՚իորձ է անում մոտենալ Հայաստանի սահմաններին, նա կովով հեռու է վանում նրան հայրենի երկրից :

Արտաշեսը ազատատենչ է ու բողոքող : Նա չի հանդուրժում բռնության լուծը . զենքի ուժով վերականգնում է իր ոտնահարված իրավունքները՝ տապալելով հայրենական գահի գավթիչներին :

✓ Արտաշեսը խաղաղասեր է ու շինարար : Այլ բռնակալ արքաների նման նա չի կովում ուրիշներին հողերը գրավելու և նրանց իշխանությունը խլելու համար, այլ զբաղված է խաղաղ ու շինարար գործունեությամբ . կառուցում է Արտաշատ քաղաքը, մեհյան է կանդնեցնում, զարկ է տալիս գիտության ու արվեստների զարգացմանը, հատուկ ուշադրություն է դարձնում երկրագործությանը : Վիպասանների վկայությամբ Արտաշեսի ժամանակ այնքան է շենանում հայոց երկիրը, որ թե լեռնային, թե դաշտային մասերում ոչ մի կտոր անմշակ հող չի մնում :

Արտաշեսը անձնագոհ է ու քաջ : Իր հայրենիքին սպառնացող վտանգը կասեցնելու համար, նա անձամբ — իբրև զինվոր ու զորավար, մաս-

նակցում է իր իսկ կազմակերպած ուղղման  
դիմադրություններին՝ հերոսության սեփական  
օրինակով գոտեպնդելով իր մարտիկներին :

Արտաշեսը երախտագետ է ու շնորհակալ :  
Նա չի մոռանում կոպի դաշտում իրենց կյանքը  
վտանգի տակ դրած իր անձնագոհ զորավարնե-  
րին ու մարտիկներին : Երվանդի դեմ պատերազ-  
մը հաջողությամբ ավարտելուց հետո , Արտա-  
շեսը առատորեն վարձատրում է թե՛ Սմբատին ,  
թե՛ Արգամին և թե՛ Գլխակի որդի Ներսեսին ,  
որի սերունդը կոչվում էր Դիմաքսյան՝ ի հիշա-  
տակ այն բանի , որ նրա հոր դեմքի կեսը կտր-  
վել էր Արտաշեսին պաշտպանելիս :

Արտաշեսից հետո , վեպի երկրորդ կենարո-  
նական , գրական դեմքը՝ Սմբատ Բագրատունին  
է : Արտաշեսի նման սա ևս օժտված է բարոյա-  
կան և Ֆիզիքական մի շարք բարեմասնություն-  
ներով : Ըստ վեպի՝

Սմբատը ջերմ հայրենասեր է : Նրա համար  
թանկ է հայրենի թագավորությունն ու հարա-  
զատ երկիրը : Սմբատը ջանք չի խնայում հայոց  
թագավորության օրինական ժառանգի (Արտա-  
շեսի) իրավունքները վերականգնելու համար :

Տեսնելով հոռմեական բանակների կողմից Հաստատանին սպառնացող մեծ վտանգը, նա մոռանում է Արտավազդի հասցրած վիրավորանքը և վճռական ընդդեմ գործով օգնութեան հասնում նրան:

Սմբատը համարակ ու քաջ ռազմիկ է: Նա սիրով մասնակցում է Արտաշեսի կազմակերպած պաշտպանական կռիւներին և ամեն անգամ աչքի ընկնում մեծ սիրազործութիւններով: Նա է, որ փախուստի է մատնում Երվանդին, սպանում Երվազին (Երվանդի եղբորը), վռնդում ալանների աշխարհից՝ բռնութեամբ այնտեղ թաղաւոր դարձած մեկին: Չնայած իր պատկառելի տարիքին, Սմբատը՝ երիտասարդի պես կռիւով, հալածում է Հաստատանից հոռմեական բանակներին:

Յիզախութեան ու քաջութեան հետ Սմբատն ունի նաև մարմնական գեղեցկութիւն և հոգու առաքինութիւն: Հարասելով ժողովրդական առասպելին, Խորենացին հետևյալն է գրում այդ առթիւ. «Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ, քանզի արդարև ըստ առասպելին ո՛չ ինչ կարի հեռի ի ճշմարտութենէն, որ

ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն ,  
և առաքինութեան ուղոյն սրսորդ , և զեզեցկու-  
թեան ալեօք վայելչացեալ , սակաւ ինչ արեան  
նիչ ունենալով յաչսն՝ որպէս դրակոնտիկոն ի  
վերայ ոսկոյս և ի մէջ մարգարտաց ծագէր . և  
ի վերա շոյտ անձին և մարնոյ՝ զգույշ յամե-  
նայնի , և աուչութիւն յաջողուածոց ունէր ի  
մարտս աուուել քան զամենայն ոք» :

Պաշտպանական մարտերի հայրենասեր հե-  
րոսների կողքին , Արտաշեսի վեպում ունախտա-  
կան զծերով պատկերված են նաև դրանց ոտխ-  
ները , օտարագլխի բռնակալները՝ «խառնված  
Արչակունի» Երվանդը , Ալանաց թագավորը ,  
հոմեական զորավար Դոմեախանոս Կորբուլոնը  
(ոմն Դոմեա) : Վերջիններիս մեջ ամենից ավե-  
լի ամբողջական է զծագրված Երվանդի կերպա-  
րը : Վեպի առաջին և զլիսավոր բացասական  
տիպն է դա , Արտաշեսի առաջին և զլիսավոր  
ախոյանը :

Ժողովրդական վիպասանները նրա անձնա-  
վորութեան մեջ խտացրել են ինքնիշխան ու բռ-  
նակալ նվաճողներին հատուկ մի շարք բացասա-  
կան զծեր : Ըստ վեպի՝

Երվանդը չար է: Նրա բնավորութիւնն այս  
գիծը զբնութեամբ է բուն վիպական ձևով: Լի-  
նելով չար աչքի տեր մարդ, նա իր գծնյա հա-  
յացքով սարսափ է ազդում բոլորին: Արքունի  
ծառաները Երվանդի արթնանալու ժամանակ որ-  
ձաքարի սալեր են բռնում նրա հայացքի դիմաց,  
որից պայթում են սալերը:

Երվանդը փառասեր է: Իշխանութեան և  
փառքի հասնելու համար նա կանգ չի առնում ո՛չ  
մի բանի առաջ: Կաշառատութիւնը, շողոքոր-  
թութիւնը, գրպարտութիւնը նրա սիրած մի-  
ջոցներն են: Կեղծ առատաձեռնութեամբ Երվան-  
դըն իր կողմն է գրավում նախարարներին և,  
Սանատրուկի մահից հետո, նրանց միջոցով  
գտնում թագավոր: Արտաշէսին մեջտեղից վե-  
րացնելու համար, գրպարտութեամբ՝ «Մարի  
որդի», «հովիվների ու նախարարանների գավակ»  
է հայտարարում նրան, և այլն:

Երվանդը արյունոտուշտ է: Իր իշխանութիւ-  
նը տեւական ու անձեռնմխելի դարձնելու հա-  
մար, նա անխնա կոտորել է տալիս Սանատրու-  
կի որդիներին:

Երվանդը վախկոտ է: Չնայած իր հաղթան-

դամ մարմնին, նա վստահ չէ իր ուժերին: Կովի  
ժամանակ չարունակ շրջապատում է իրեն գին-  
վորներով: Նախօրոք մարդիկ է վարձում Ար-  
տաշեսին սպանել տալու համար, և այլն:

Ծնորհիվ իր արտահայտած բարձր գաղա-  
փարները, Արտաշեսի վեպը երկար դարերի ըն-  
թացքում եղել է հայ ժողովրդի սիրված ստեղ-  
ծագործություններից մեկը\*):

Ժողովրդական գուսաններն ու վիպասաննե-  
րը սերնդից-սերունդ, բերնից-բերան երգել ու  
սպասմել են իրենց հայրենիքին օտարերկրյա բռու-  
նակալների ծանր լծից ազատող, ժողովրդին սի-  
րելի՝ արի ու քաջ, խաղաղասեր ու շինարար  
Արտաշես թագավորի և նրա ռազմական զորա-

---

\*) Խորենացին վկայում է, որ մինչև իր օրերը (V  
դար), Գողթան գավառի գուսանները երգելիս են եղել  
Արտաշեսի գործերի մասին: «Արտաշեսի վերջնայ գործք  
բազում ինչ հայանի են ի վիպաստնացն, որ պատմեն ի  
Գողթան»: Նման մի տեղեկություն ունի նաև Գրեգոր  
Մագիստրոսը (XI դար): Իր թղթերից մեկում նա հի-  
շատակում է, թե ինչպես գյուղացիների մեջ («ի գոե-  
հիկս արանդեայ») զեռ ավանդվել են Արտաշեսի վեպի  
սուանձին հատվածները:

վիդ՝ հերոսական Սմբատ զորավարի կյանքի ու սխրագործությունների մասին: Արտաշեսի և Սմբատի օրինակով նրանք սգեկոչել են իրենց հայրենակիցներին ազատագրական կռվի զուրս դալու ժամանակակից բռնակալ երվանդների, կորբուլտների ու ալանական հորդաների դեմ:

## ԱՐՁԱԿԻ, ՎԱՍԱԿԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ

«ՄԱՆ ՈՋ ԻՄԱՑԵԱԼ՝ ՄԱՆ Է:  
ՄԱՆ ԻՄԱՑԵԱԼ՝ ԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ Է»:  
ԵՂԻՇԵ

Հայկական Փոլիկոթի մեջ առանձնահատուկ տեղ են դրավում պարսից նվաճողների դեմ IV—V դարերում հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմները: Վերջիններիս վիպական-գեղարվեստական արձագանքներն են՝ հայոց Տիրան և Արշակ թագափորների, Վասակ և Մուշեղ սպարապետների, Գայլ Վահանի, Սմբատ զորավարի և այլոց զրույցները: Հայկի և Բելի

առատակելի և Արտաշեսի վեպի նման դրանք Հասեւ եւս մեզ դրական որոշ մշակմամբ, մեր մի շարք հին հեղինակների միջոցով\*) :

**Չրույցների համառոտ բովանդակութիւնը հետեւյալն է :**

**Տիրան և Շապուհ :** Հայոց Տիրան թագաւորն ուներ մի ազնւագարմ, դեղեցիկ ձի, որի նմանը չկար ոչ մի տեղ : Տիրանի սենեկապետ Փիսակը՝ մատնում է պարսից Շապուհ արքային իր տիրոջ ձին : Շապուհը պահանջում է Տիրանից նրա ձին :

---

\*) Այսպես օրինակ, Տիրանի, Արշակի, Վասակի և Մուշեղի զրույցները մենք գտնում ենք V դարի պատմիչ՝ Փալստոս Բյուզանդի «Պատմութիւն Հայոց» գրքի էջերում : Գայլ Վահանի, Սմբատ զորավարի և Վարդգաբլուրի զրույցները օգտագործված են VII դարի հեղինակ՝ Հովհ. Մամիկոնյանի «Պատմութիւն Տարսնոյ» վերնադրով վիպարտան աշխատութեան մեջ : Սյունյաց Անդոկ իշխանի և նրա որդի Բաբիկի զրույցը բերված է նույն դարի մտաենագիր՝ Մ. Կաղանկատուացու «Պատմութիւն Աղվանից աշխարհի» մատենագրական գործում, և այլն :

Նույն այդ զրույցների մի երկու տարբերակ, ժողովրդի բերանից լսելով զրի են առել նաև XIX և XX դարերի մեր բանահավաքներից ոմանք :

Տիրանը գտնել է տալիս իր ձիուն նման մի ուրիշը և ուղարկում Շապուհին: Փիսակը երկրորդ անգամ մասնուծ է Տիրանին, և շարախոսությամբ գրգռում Շապուհին նրա դեմ:

Հաշտություն հաստատելու պատրվակով պարսից արքան ընծաներով դալիս է Տիրանի մոտ: Ընթրիքի միջոցին, երբ լավ հարբում են Տիրանն ու իր մարդիկ, հանկարծ դուրս են գալիս Շապուհի դարանակալ զինվորները՝ կապտում են հայոց թագավորին, կողոպտում նրա գանձերը, և, կնոջն ու որդիներին գերելով, ճանապարհ ընկնում դեպի Պարսկաստան:

Գալարիս անունով սահմանամերձ հայկական գյուղում, Շապուհի կարգադրությամբ նրա մարդիկ չիկացած ածուխով հանում են Տիրանի աչքերը: Վերջինիս կուրացման լուրը լսելով՝ հավաքվում են հայոց նախարարներն ու զորագլուխները և ժողովրդի մեծ բազմության հետ գոռնդ կազմելով, հետապնդում են Շապուհին՝ սակայն չգտնելով նրան իրեն հողում՝ հրի ու սրի են մասնուծ նրա երկիրը\*):

\*) Փ. Բյուզանդ, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 73—83:

Արշակ և Շապուհ: Դաշինք կնքելու պատրու-  
վակով Շապուհ արքան հրավիրում է իրեն մոտ  
հայոց Արշակ թագավորին: Վերջինս դալիս է իր  
զորքերի զլխավոր հրամանատար Վասակ սպա-  
րապետի ուղեկցութեամբ: Շապուհը գերում է  
երկուսին էլ: Այնուհետև, Արշակին փորձելու  
համար, պարսից արքան՝ աստղագետների ու  
զուշակողների խորհրդով, Հայաստանից բերել  
է տալիս երկու բեռ հող, մի կահույք ջուր, և  
հրամայում՝ իր խորանի հատակի կեսը ծածկել  
բերված հողով և ցողել այն հայկական ջրով:  
Այդ անել տալուց հետո, Շապուհը Արշակի ձեռ-  
քից բռնած շրջում է խորանի ներսում և հարց  
ու փորձ անում նրան: Պարսկական հողի վրա  
գտնված միջոցին Արշակը հնազանդութեան  
խոսք է ասում Շապուհին և զղջում՝ նրա դեմ  
մղած պայքարի համար, սակայն հայրենի հողի  
ու ջրի վրա ոտք դնելուն պես՝ դոտեպնդվում է  
և խրոխտացած արհամարհում իր ախոյանին:  
Փորձը մի քանի անգամ կրկնելուց հետո, հա-  
մոզվելով Արշակի անհնազանդութեան ու ըմբոս-

տության մեջ, Շապուհը հրամայում է՝ շղթա-  
յակապ բանտարկել նրան Անուշ բերդում\*):

Վասակ և Շապուհ: Շապուհ արքան կանչել  
է տալիս Վասակ սպարապետին (որին դերել էր  
դավադրարար) և ծաղրելով, հանդիմանում է.  
«Աղվե՛ս, այդ դու էիր, որ այնքան նեղություն  
պատճառեցիր ինձ. այսքան տարի կոտորեցիր իմ  
մարդկանց. ո՞ւր պիտի գնաս այժմ իմ ձեռքից:  
Աղվեսի մահով սպանել կտամ քեզ»:

Իսկ Վասակը պատասխանում է և ասում.  
«Փոքր հասակով և անդէն դերուն ես այժմ դու  
տեսնում միայն: Մինչ այժմ ես առյուծ էի, իսկ  
հիմա՝ աղվե՞ս դարձա: Քանի ես դեռ Վասակն  
էի, հսկա էի քեզ համար. մի ոտս մի լեռան  
վրա էր, մյուսը՝ մյուս լեռան. երբ հենվում էի  
աջ ոտքիս՝ աջ լեռն էր իջնում ցած, երբ հեն-  
վում էի ձախին, ձախն էր գնում ցած»:

«Հայտնիր ինձ, թե ո՞վքեր են այդ լեռնե-  
րը», հարցնում է Շապուհը:

«Երկու լեռներն էլ մեկը դու էիր, մյուսը՝  
հունաց թաղավորը» պատասխանում է Վասակը,

\*) Փ. Բյուզանդ, Պատմություն Հայոց, Թիֆլիս,  
1913, էջ՝ 248—257:

և ասում. «Քանի դեռ մենք բաց աչքք չէինք  
ընկել խորխորատի մեջ, ես տապալում էի քեզ.  
այժմ ինչ ուզում ես, արա»:

Գազազած Վասակի համարձակ պատասխա-  
նից, Շապուհը հրամայում է մորթաղերձ անել  
ներան, և մորթը խոտ լցնելով՝ տանել Անուշ  
բերդը, բանտարկված Արշակի մոտ\*):

Մուշեղ և Շապուհ: Շապուհ արքան մեծ  
զորքով գալիս է Հալաստանի վրա: Վասակ Մա-  
միկոնյանի որդի Մուշեղ զորավարը հայկական  
բանակի գլուխն անցած՝ կուլի է դուրս գալիս  
ներա դեմ, և մեծ ջարդ տալով, հետ մղում:  
Շապուհը հազիվ աղատելով գլուխը՝ ճողոպրում  
է միաձի: Հայերը գրավում են պարսից թագա-  
վորի դանձերը, գերում նրա կանանց և ձերբա-  
կալում ավաղանիից շատերին: Իր հոր (Վասա-  
կի) վրեժն առնելու համար՝ Մուշեղը հրամա-  
յում է մորթաղերձ անել 600 հոգի պարսից ավա-  
ղանիից: Միաժամանակ նա ողջ և անարատ վե-  
րադարձնում է Շապուհին նրա կանանց: Շապուհ

---

\*) Փ. Բյուզանդ, Պատմութիւնն Հայոց, Թիֆլիս,  
1913 թ., էջ՝ 255—257:

արքան իր դինու հավաթի վրա նկարել է տալիս Մուշեղին սպիտակ ձիու վրա, և ամեն անգամ, ուրախության ժամին, ձեռքն առնելով դավաթը՝ ասում է. «Ճերմակաձին դինի արբեցե՞»\*) :

Անդոկ և Շապուհ : Անդոկ Սյունին անպատված զգալով իրեն պարսից արքունիքում՝ ապրատամբում է Շապուհի դեմ, ավերում Տիգրոնը և ամրանում Սյունյաց Բաղաբերդ ամրոցում : Շապուհը հրամայում է իր զորքերին՝ «Ելանել ի Սիւնիս և դերել զխօսուն և դանասուն» : Պարսիկները բազմիցս հարձակվում են և ամեն անգամ հետ մղվում քաջարի սյունեցիներից : Կատաղած Շապուհը կարգադրում է մոխրով լի մի պղնձե սանդղնել իր արքունիքի դռանը, որպեսզի անցնող-դարձող՝ «Կոպէին ի նմա և ասելին . Սիւնեաց տէրութիւնն ընդ այս մոխիր ի վայր լիցի, և նոցա կեանքն և խորհուրդն» : Անդոկի որդի՝ Բաբիկը, որոշում է վերացնել նախատինքի սանդղ : Նա ծպտյալ ծառայության է մտնում Պարսից բանակը, և մեծ քաջություններ

---

\*) Փ. Բյուզանդ, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ՝ 282—284 :

գործելով՝ վերացնել է տալիս նախատինքի սան-  
դը, տեր դառնալով հայրենի երկրին\*):

Գայլ վահան: Մուշեղի որդի Վահան Մա-  
միկոնյանի գլխավորութեամբ հայերը մի քանի  
անգամ մեծ ջարդ են տալիս պարսիկներին:  
Պարսից Ասուր զորավարը մարդ է ուղարկում  
Վահանի մոտ և ասում. «Այ չարաբարոյ Գայլ  
Վահան, ընդէ՞ր այդպես յանդգնեալ անամօթիս:  
Ա՛րդ, արի առ մեզ, և լէ՛ր հարկատու, ապա թէ  
ոչ, մեռանիս որպէս զչուն»: Վահանն իր Սմբատ  
որդու հետ անցնելով հայոց զորքի գլուխը՝  
ճակատամարտի է մտնում պարսիկներին դեմ, և  
չնայած իր ութսունութամյա պատկառելի տա-  
րիքին, հերոսաբար մարտնչելով, պարտութեան  
է մատնում նրանց\*\*):

Սմբատ և Վախթանգ: Պարսից Վախթանգ  
զորավարը 20·000 զորքով գալով Հայաստան,  
առաջարկում է հայոց Սմբատ զորավարին՝ հնա-

---

\*) Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Ազգանից  
աշխարհի, Թիֆլիս, 1913 թ. էջ՝ 119—125:

\*\*) Հովհաննէս Մամիկոնեան, Պատմութիւն Տարսնոյ,  
Վենետիկ, 1832, էջ 30—33:

զանդվել և հարկ վճարել: Սմբատն իր փոքրաթիվ զորքերով կռվի է դուրս գալիս նրա դեմ: Վախթանգը գիշերով շրջապատում է Սմբատին: Վերջինս ուզում է գիշերով մարտի ելնել: Քահանաները խորհուրդ չեն տալիս նրան: Սակայն, Սմբատը, բոցավառ ջահը ձեռքին, հարձակվում է թշնամու վրա: Լույսը կուրացնում է պարսիկ զինվորների աչքերը. նրանք կարծում են թե՛ դա մի մարդ է, որի մազերից լույս է ճառագում: Խուճապահար փախուստի են դիմում: Մթուփյան մեջ չջուրկելով իրար, պարսիկներն սկսում են կոտորել իրենց իսկ առաջապահ զինվորներին: Տեսնելով այդ, Սմբատը քաջալերում է իր մարտիկներին, և նրանց դլուխն անցած ջարդում թշնամուն: «Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեան ելանէին. որ և թիլ կոչեցաւ անուն տեղւոյն այնօրիկ»\*):

Վարազաբուր: Սմբատի նիզակակից Վարազ Պալունին մեծ ջարդ է տալիս պարսիկներին: Նրա կոտորած դիակներից՝ ահադին բլուր է կաղմվում, որը և Վարազի անունով անվանվում

\*) Հովհաննես Մամիկոնյան, Պատմութիւն Տարոնոյ, Վենետիկ, 1832, էջ՝ 34:

է Վարազաբուր: Երբ նեխում են դիակները,  
մոտիկ գյուղացիք երգով ասում են. «Կերան  
դազանք զմարմինս դիականցն Վարազայ և դի-  
րացան: Կուղ կերեալ, ուռաւ որպէս՝ զարջ, և  
ողուէս հպարտ եղև քան զառիւծ: Գայլ քանզի  
չատակեր էր, պայթեաց, և արջ, քանզի զոր  
ուտեն՝ շմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ: Ան-  
դեղք, քանզի ազահք էին, նստան և այլ ոչ կա-  
րացին վերանալ. մկունք քանզի շատ կրեցին ի  
ծակսն՝ ոտքն մաշեցան»\*):

Պատմութիւնից հայտնի է, որ IV—V դա-  
րերում պարսից նվաճողները մի քանի անգամ  
արչավանքներ են ձեռնարկել Հայաստանի ու  
նրա առանձին գավառների (Տարոն, Սյունիք)  
վրա՝ դրավելու և հպատակ, հարկատու դարձ-  
նելու նպատակով: Այդ արչավանքները տեղի են  
ունեցել գլխավորապէս պարսից սասանյան դի-  
նաստիայի թագավորների օրով: Իր աշխարհա-  
կալ ձգտումներով և հայահալած գործունեու-  
թյամբ դրանցից առանձնապէս աչքի է ընկել  
Շապուհ II-ը, որ հայ պատմական գրականու-

\*) Հովհաննէս Մամիկոնեան, Պատմութիւն Տարոնս,  
Վեպրտիկ, 1832, էջ՝ 42

Թյան մեջ հայտնի է՝ Շապուհ Վարազ, Շապուհ  
Երկայնակյաց անուններով:

Հայտնի է նաև, որ հայ ժողովուրդը հա-  
մախմբված իր Թագավորների ու զորավարների  
չուրջը՝ պաշտպանել է դրավի Թշնամուց իր հայ-  
րենիքը, ազգային ինքնուրույնությունն ու ան-  
կախութիւնը: Իրենց աննկուն կամքով և անձ-  
նուրաց խիզախութեամբ հատկապես աչքի են  
ընկել հայոց Արշակունի Թագավորները (Արշակ  
II), և հայկական բանակի ժառանգական սպա-  
րապետները՝ Մամիկոնյան տոհմի ներկայացու-  
ցիչները (Վասակ, Մուշեղ):

Արշակի, Վասակի և այլոց զրույցների մեջ  
պատմական են ոչ միայն գլխավոր դեպքերը՝  
պարսիկների արշավանքներն ու կողոպուտը,  
հայերի դիմադրութիւնը, այլև գործող անձե-  
րի, հերոսների զգալի մասը (Տիրան, Արշակ,  
Շապուհ, Վասակ, Մուշեղ և այլն):

Մակայն, պատմական հիշյալ դեպքերն ու  
դեմքերը նույնութեամբ չէ, որ դրսևորվել են  
խնդրո առարկա զրույցներում: Բեկվելով ժողո-  
վրդի երևակայութեան մեջ և դառնալով բա-  
նավոր վիպական ստեղծագործութեան առարկա,

այդ դեպքերն ու դեմքերը ենթարկվել են նկա-  
 տելի փոփոխութեանն: Ժողովրդական բանա-  
 սացները հաճախ շփոթել են դրանք, շատ բան  
 մոռացութեան տակ կամ ավելացրել իրենց  
 կողմից, ըստ պատկերի յուրում խմբագրել  
 դրանք: Փոխված են նախ և առաջ պատմական  
 դեպքերն իրենց բնույթով ու ժամանակագրու-  
 թյամբ: Այսպես օրինակ, հայտնի է, որ պարս-  
 կական արշավանքների շարժառիթը միշտ էլ  
 եղել են պարսիկների նվաճողական ձգտումները:  
 Մինչդեռ, ըստ զրույցների, հայերի և պարսիկ-  
 ների առաջին ընդհարման պատճառը հայոց  
 Տիրան թագավորի ձին է: Հայտնի է այնու-  
 հետև, որ հայերի կողմը Շապուհի հետ տեղի է  
 ունեցել Արշակ II-ի և Վասակ սպարապետի ժա-  
 մանակ: Ըստ զրույցների այդ կողմը կրկնվում  
 է մի քանի անգամ (Արշակի, Վասակի, Մուշե-  
 ղի, Անդոկի և այլոց օրով): Վիպական ստեղծա-  
 դործութեանն հատուկ մի երևույթ է դա,  
 երբ՝ «միևնույն դեպքը փոքր ինչ փոփոխված  
 ձևով պատմվում է մի քանի դործող անձերի  
 վրա, կամ թե միևնույն դեպքով փոխանակ մի  
 անգամ պատմել պրծնելու՝ կրկնված ձևով, փո-



քըր տարբերություններով մի քանի անգամ  
պատմվում է նույնիսկ մի հերոսի համար»\*) :

Ավելի շատ ու առավել ակնհայտ են պատ-  
մական դեմքերի՝ անունների, էյանքի ու գոր-  
ծունեության մեջ կատարված վիպական-ֆոլկլոր-  
ային փոփոխությունները : Այսպես օրինակ, մի  
տեղ՝ Գայլ Վահանի և Սմբատի անուններով  
պահված են հիշողություններ V դարի հայտնի  
հերոս Վարդան Մամիկոնյանի՝ պարսիկների դեմ  
մղած հերոսական ճակատամարտերից : Մի այլ  
տեղ պարսիկների դեմ գիշերով՝ Ջահով կամ բո-  
ցավառ մոմերով կովելը պատմված է և՛ Սըմ-  
բատ գորավարի, և՛ Մուշեղի համար, և այլն :  
Լինելով ծագումով իրական-պատմական անձնա-  
վորություններ, հիշյալները վերաստեղծված են  
ժողովրդի երևակայության մեջ և այդ երևա-  
կայության միջոցով : Պատմական դեպքերի բե-  
րումով դառնալով ժողովրդին սիրելի կամ ատե-  
լի գործիչներ՝ դրանք, ըստ այդմ, ներկայացված  
են իբրև դրական կամ բացասական տիպեր :

---

\*) Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, «Աղա-  
դրական հանդես», գիրք XVI, էջ 79 :

Պարսից նվաճողներին, հանձին Ծապուհ  
արքայի, Վախթանգ զորավարի և այլոց, առաջ-  
նորդում են բռնակալական՝ ձգտումները: Իրենց  
երկրում խաղաղ ապրելու և շինարար աշխա-  
տանքով պարապելու փոխարեն, նրանք անդա-  
դար զբաղված են հայ թագավորներին ու զորա-  
վարներին դավելու և Հայաստանի վրա արյու-  
նահեղ արշավներ կազմակերպելու գործով: Ի-  
րենց նպատակներին հասնելու համար նրանք ոչ  
մի միջոցի առաջ կանգ չեն առնում: Բռնություն-  
նը, կեղծիքն ու շողոքորթությունը նրանց փոր-  
ձած միջոցներն են:

Իրրև չարի կրողներ և նվաճողական պատե-  
րագմաների հրահրողներ՝ պարսից բռնակալները  
սովորաբար արժանի հատուցում են ստանում  
իրենց արարքների համար՝ պատժվելով ու  
պարտվելով:

Հակառակ դրանց, հայ թագավորներին ու  
զորավարներին ժողովուրդն օժտել է հասարա-  
կական և անհատական լավագույն հատկու-  
թյուններով: Բոլորի մշտաբխուն ձգտումն է՝  
թույլ չտալ օտարերկրյա նվաճողներին ոտք  
վնկելու իրենց երկիրը:

Նրանց ցայտուն ներկայացուցիչն է Մուշեղ  
զորավարը: Ըստ ժողովրդական զրույցի՝ նա  
ճիգ ու ջանք չի խնայում, որպեսզի օտարները  
չկարողանան Հայաստանի սահմաններից անդամ  
մի կտոր հող խլել:

«Այլ քաջն գորավարն սպախապետն հայոց...  
Զտիվ և գիշեր կայր յաշխատութեանն,  
Զանայր և ֆֆնէր կալ ի ֆակատու պատերազմին,  
Եւ ոչ քողոյր բնաւ ամենևին  
Եւ ոչ քան զկորի մի գլխին  
Ի ասիմանաց երկրին Հայոց արեֆ վտարել»...

Իրենց մղած պայքարի արդարացի լինելու  
բարձր գիտակցությունն է, որ անհողողը կամք  
ու մեծ խիզախություն է ներշնչում հայ թագա-  
վորներին ու զորավարներին: Այդ գիտակցու-  
թյունն է, որ մահվան դեմ արհամարհանք է  
ներարկում նրանց՝ դարձնելով անձնագոհ ու  
հերոս, միշտ սլատրաստ մեռնելու իրենց հայրե-  
նիքի համար («Մեռանել ի վերայ հայրենեաց»):  
Նույն այդ գիտակցությունն է նաև, որ ասպա-  
հովում է նրանց հաղթանակը թշնամու հանդեպ,  
չնայած նրա դերակշիռ ուժերին:

Հայրենասիրութեան, խիզախութեան, անձնա-  
զոհութեան ու հերոսութեան հետ՝ Արշակի,  
Վասակի և այլոց զրույցներում հայ զորավար-  
ներն ու զինվորները օժտված են նաև մարդկա-  
յին այլ զրական հատկութիւններով— աշխա-  
տասիրութեամբ, աղնվութեամբ, շիտակու-  
թեամբ, վեհանձնութեամբ և այլն: Հատկապես  
բնորոշ է այս տեսակետից, դարձյալ նույն Մու-  
շեղ զորավարի կերպարը: Նա «միամտութեամբ  
և արդար վաստակով միշտ ջանում է և աշխա-  
տանք թափում հայոց աշխարհի թագավորու-  
թեան համար»: Երբ Շապուհը հազիվ ձողուպրե-  
լով նրա ձեռքից, վախուստի է դիմում՝ գերի  
թողնելով իր կանանց, Մուշեղը վեհանձնաբար  
վերադարձնում է նրանց իրենց տիրոջը:

Հայ զորավարների ու զինվորների մեջ ա-  
ռանձնապես ուժեղ է արտահայտված նրանց ան-  
սահման սերն ու նվիրվածութիւնը իրենց հայ-  
րենիքին, նրա հողին ու ջրին: Իբրև ցայտուն  
օրինակ, հիշենք «Արշակ և Շապուհ» զրույցը:  
Հին հունական դիցաբանութեան հուշակափոր հե-  
րոս Անթեի նման, պարսից Շապուհ արքայի  
ստիս հայոց Արշակ թագավորը՝ կտրվելով իր

Հայրենի հողից ու ջրից (ի՞մա իր ժողովրդից),  
թուլանում է և ընկճվում Շապուհի հանդեպ, և  
ընդհակառակը, հաստատ կանգնելով այդ հողի  
ու ջրի վրա, գոտեպնդվում է և նոր լիցք ստա-  
նալով— խիզախորեն դիմադրում իր թշնամուն:

### «ՍՍՍՈՒՆՅԻ ԳԱՎԻԹ»

«ԳԱՅԻՐ ՍՍՍՈՒՆ՝ ՔԱՆՑ ԳԵԼ ԳԱԶԱՆ,  
ԵՏ ԷՍ ԳԱԼԻ՝ ՔԱՆՑ ՇՈՒՆ ՎԱԶԱՆ»:

Մտալիանանց ծաղրը՝ Կոզբաղնից

Հայ ժողովրդական հերոսապատումների  
գլուխ գործոցն է՝ «Սասունցի Դավիթ» դյու-  
ցազնավեպը\*): Նրա մեջ բյուրեղացած են հնա-

---

\*) Վեպի բնագիրը՝ բազմաթիվ պատումներով 19-րդ  
դարի 80-ական թվականներին, ժողովրդական վիպասան-  
ներից լսելով, դրի են առել և հրատարակել են մեր բա-  
նասեր-բանահավաքները՝ Գ. Սրվանձտյան, Մ. Արե-  
ղյան, Ս. Հայկունի, Ե. Լալայան, Բ. Խալաթյան և  
այլն:

Ներկայումս մեր ձեռքի տակ կան վեպի 50-ից ավել-

դարյան հայ բանահյուսութեան բովանդակութեան ու արվեստի լավագույն տարրերը :

Ծնունդ առնելով պատմական Հայաստանի հարավային դավառներում (Սասուն, Տարոն), «Սասունցի Դավիթ»-ը դարերի ընթացքում տարածվել է Հայաստանի շատ շրջաններում՝ դստնալով իսկական համահայկական-համաժողովրդական մի ստեղծագործութուն :

«Սասունցի Դավիթ»-ը մի ծավալուն ու մեծ հերոսավեպ է՝ բաղկացած չորս առանձին մասերից (ճյուղերից) : Դրանցից առաջինը հայտնի է «Սանասար և Բաղդասար», երկրորդը՝ «Մեծ կամ Առյուծաձև Մհեր», երրորդը՝ «Սասունցի Դավիթ» և չորրորդը՝ «Պատիկ Մհեր» անունով : Վեպի լավագույն և ամենաընդարձակ մասը՝ երրորդը՝ «Սասունցի Դավիթ» ճյուղն է :

Կապված լինելով իրար հետ մի միասնական զաղափարով (հայրենիքի պաշտպանություն), սերունդների հաջորդությունը (հոր և որդու

---

և պատումներ (տաղարված ու անտիպ), դրի առնված տարրեր անձանց կողմից, տալրեր ժամանակ, տարրեր վայրերում :

կապով) և վիսպական դործողութեան աշխարհա-  
գրական միջավայրի ընդհանրութեամբ (Սա-  
սուն), վեպի չորս ճյուղերից յուրաքանչյուրն  
ունի իր դործողութեան ինքնուրույն կենտրոնն  
ու անկախ կյանքը:

Վեպի ճյուղերի համառոտ բովանդակու-  
թյունը հետևյալն է.

«Սանասար և Բաղդասար»: Բաղդադի խա-  
լիֆան, Հայաստանի վրա կատարած իր արշա-  
վանքներից մեկի ժամանակ, բռնութեամբ կնու-  
թեան է առնում հայոց Գաղիկ թագավորի աղջը-  
կան՝ զեղեցիկուհի Ծովինարին: Աղբյուրից իր  
խմած ջրից հղիանալով, Ծովինարը ունենում է  
երկու դյուցազուն զավակներ՝ Սանասարին և  
Բաղդասարին: Ժամանակ անց Բաղդադի խալի-  
ֆան նորից է գալիս Հայաստանի վրա: Սանա-  
սարն ու Բաղդասարը սպանում են խալիֆային  
և հեռանում նրա երկրից: Երկար թափառումնե-  
րից հետո, երկու եղբայրները մի լեռնային, ա-  
նառիկ վայրում կառուցում են իրենց բերդ-չե-  
նը՝ Սասուն անունով:

Ստանալով Քաջանց թագավորի աղջիկ՝ Դեղ-  
ձունի նամակը, Սանասարը գնում է Պղնձե քա-

դաք՝ նրա ետևից : Ճանապարհին նա հանդիպում է մի շարք արգելքների : Բաղդասարն իր սևացած մատանուց գուշակելով եղբոր ծանր դրությունը՝ օղնության է հասնում նրան : Երկուսով հաղթահարելով բոլոր դժվարությունները, ամուսնանում են՝ Սանասարը—Դեղձունի, իսկ Բաղդասարը—նրա քրոջ հետ : Սանասարից և Դեղձունից ծնվում են՝ Վերգոն, Ձենով Հովանը և Մհերը : Բաղդասարը մնում է անժառանգ : Նա դնում է Բաղդադ, որտեղ և մեռնում է : Մհերի ծնվելուց հետո, շուտով մեռնում է նաև Սանասարը :

«Մեծ կամ Առյուծաձև Մեծեր» : Մհերը մեծանալով սկսում է պարապել որսորդությամբ : Նա յոթ տարի որսով կերակրում է իր հայրենակիցներին : Սասունը հարևան հացառատ երկրների հետ կապող ճանապարհին մի առյուծ է լույս ընկնում : Մհերն սպանում է առյուծին և ազատում սասունցոց վերահաս սովից : Ժամանակ անց, մենամարտելով Մեծ Մսրա Մելիքի հետ, Մհերը հաղթում է նրան և ազատում Սասունը հարկատվությունից : Քեռին և հորեղբայրը ուղում են ամուսնացնել Մհերին գեղեց-

կուհի Արմաղանի հետ: Պարզվում է, որ նրան տարել է Սպիտակ Դեը: Սպանելով վերջինիս՝ Մհերը ամուսնանում է Արմաղանի հետ: Մհերից ու Արմաղանից ծնվում է Դավիթը, որը մանկուց ծնողների վաղաժամ մահվան հետևանքով, մնում է իր հորեղբոր՝ Չենով Հովանի խնամքին:

«Սասունցի Դավիթ»։ Չկարողանալով խնամել Դավիթին, Հովանը ուղարկում է նրան Մըսր՝ Մեծ Մելիքի կնոջ մոտ, որի հետ ժամանակին կենսակցել էր Մհերը՝ ունենալով նրանից Փոքր Մսրա Մելիքին: Մանուկ Դավիթի մեջ իր ապագա ախոյանին գուշակելով, Մելիքը, փահելավանների ձեռքով, ուղում է սպանել նրան: Սակայն Դավիթը, ինքը պատուհասելով փահելավաններին, անվնաս վերադառնում է Սասուն: Մի օր, որսից վերադառնալով, նա իր հայրենական տանը հանդիպում է Մելիքի հարկահաններին, յոթ տարվա հարկը չափելիս: Դավիթը պատուհասում է նրանց և ձեռնուևայն հետ վերադարձնում: Գազազած Մելիքը մեծ զորքով գալիս է Սասունի վրա: Աղքատ պառավի ցուցմունքով ստանալով հոր զենքերն ու ձին, Դա-

վիթը կուլի է դուրս գալիս և մենամարտելով Մելիքի հետ՝ թրի մի հարվածով երկու կես անում նրան :

Ձենով Հովանը նշանում է Դավթին Չմշկիկ Սուլթանի հետ : Սակայն Դավիթը լսելով Խանդուլի գեղեցկության համբավը, ամուսնանում է նրա հետ : Վիրավորված Չմշկիկը մենամարտի է հրավիրում Դավթին : Վերջինս խոսք է տալիս յոթ օրից վերադառնալ, սակայն մոռանում է իր խոստումը... Դավթից և Խանդուլից ծնվում է մի դյուցազուն գավակ, որին պապի անունով՝ Մհեր են կոչում : Յոթ տարի անց հիշելով Չմշկիկին տված իր խոստումը, Դավիթը գալիս է նրա մոտ : Չմշկիկի աղջիկը դարանից թունավոր նետով սպանում է Դավթին : Լսելով նրա մահվան բոթը՝ Խանդուլը ինքնասպան է լինում :

«Պատիկ Մհեր» : Մեծանալով, Մհերը սպանում է Չմշկիկին և ավերում նրա երկիրը : Հովհանի կնոջ զրպարտության հետևանքով՝ վտարվելով հայրենական օջախից, Մհերը սկսում է աստանդական կյանք վարել : Իր շրջադայությունների միջոցին նա ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ, ընկերանում քառասուն

փահլեւան եղբայրների հետ, սպանում նրանց  
հայրենի քաղաքն ավերող մարդակեր պառավին,  
ազատում հեղեղումից Ջղիրե քաղաքը, և այլն:  
Ժամանակ անց, Հովանի կանչով Մհերը վերա-  
դառնում է Սասուն և ոչնչացնում իր հայրենիքի  
վրա բռնանալու փորձ անող Կողբազնի թոռներին:

Հորեղբոր և կնոջ մահվանից հետո, մենակ  
մնացած լինելով աշխարհում, և դառնացած  
չըջապատի անարդար կարգերից՝ դադարած  
Մհերը կռիվ է պահանջում աստծուց, մենա-  
մարտում նրա ուղարկած հրեշտակների հետ  
և... փակվում Ակովու քարում՝ «չար աշխար-  
հի» վերափոխումից հետո այնտեղից դուրս դա-  
լու պայմանով:

Ինչպես ամեն մի ժողովրդական վեպ, «Սա-  
սունցի Դավիթ»-ը իր հիմքով պատմական ստեղ-  
ծադործութուն է: Նրա մեջ վիպականորեն ան-  
դրադարձել են արաբական խալիֆաթի դաժան  
տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած ա-  
ղատադրական պայքարի նշանակալից դրվազնե-  
րը: Վեպի բազմաթիվ սլառումներում վերար-  
տադրված դեպքերի ու դեմքերի զուգադրու-  
թյունը համեմատությունը տիպալ ժամանա-

կաշքջանում Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադրությունների, իրական դեպքերի ու դեմքերի հետ պերճախոս կերպով հաստատում է այդ :

Պատմությունից հայտնի է, որ 7-րդ դարի կեսերին, արաբական խալիֆաթը մի քանի անգամ արյունալի արշավանքներ կազմակերպելով Հայաստանի վրա, 650 թվին տիրում է այն՝ դարձնելով իրեն հպատակ երկրներից մեկը : Հայաստանի վրա, այնուհետև, մոտ երեք դար, ծանրանում է խալիֆաթի հարստացին ծանր լուծը : Արաբ խալիֆներն իրենց սատիկանների միջոցով, հարկի անվան տակ, սկսում են կողոպտել երկիրը, թալանել ժողովրդին՝ տանելով նրա ունեցվածքն ու ապրուստի վերջին միջոցները : Սակայն, հայրենասեր և ազատատենչ հայ ժողովուրդը լուելյայն չէ, որ ընդունել է արաբական տիրապետությունը, ոչ էլ հնազանդությամբ ենթարկվել խալիֆաթի հարստահարություններին : Նա մեկից ավելի անդամներ հերոսաբար պաշտպանել է իր հայրենիքի սահմանները արաբական բանակների հարձակումներից,

և բաղմիցս զինված աստամբել արար կեղեքիչ  
հարկահանների ու ոստիկանների դեմ :

Առանձնապես բնորոշ են այս տեսակետից ,  
Ծրդ դարի կեսերին , պատմական Հայաստանի  
Տարոն և Սասուն դավառներում տեղի ունեցած  
աստամբուլթյունները , որոնց առիթ է ծառա-  
յում խալիֆաթի հարկային լուծի ծանրացումը :  
Համառոտակի նշենք այդ աստամբուլթյունների  
հետ կապված պատմական կարևոր փաստերը :

849 թվին Ջափը անունով արար ամիրապե-  
տը Հայաստան է ուղարկում իր Աբուսեթ ոստի-  
կանին՝ հարկ հավաքելու : Սակայն Աբուսեթի  
«սուքելությունը» անհաջողության է մատնը-  
վում : Տարոնի և Վասպուրականի բնակչությու-  
նը կես ճանապարհից հետ է վերադարձնում  
նրան , տալով պահանջված հարկի մի մասը  
միայն : Աբուսեթին հաջորդում են նրա զորա-  
վարներ՝ Ալան և Մուսեն : Մրանք ուղում են դե-  
քի ուժով հասնել իրենց նպատակին , սակայն մեծ  
ջարդ կրելով նույն դավառի ապստամբ ժողո-  
վրդի կողմից , հողիվ են ազատում իրենց  
կյանքը : Պարտված Ալայի և Մուսեի փոխարեն ,  
ամիրապետը 851 թվին մեծ բանակով Հայաս-

տան է ուղարկում Յուսուֆ ոստիկանին: Վերջինս գրավում է ամբողջ հարափայլին Հայաստանը՝ ավերելով երկիրն ու գերեվարելով բնակիչներին: Յուսուֆի գավառական կառավարիչներից մեկը նույն ժամանակ կողոպտում է Մասունում գտնվող Աքթան—Արթան (= Մարութա) վանքը՝ անարգելով ու պատուհասելով նրա միաբաններին:

Հիշյալ ասպատակութուններից, շնորհիվ իր անառիկ դիրքի և ըմբոստ ժողովրդի, գերծ է մնում Մասունի Խուլթ կոչվող լեռնային մասը միայն: Վերջինիս բնակիչները, «ոմն» Հովնանի առաջնորդությամբ, ապստամբում են Յուսուֆի դեմ, դուրս քշում նրան իրենց երկրից: Այնուհետև ապստամբները շրջապատում են Մչո ս. Փրկիչ եկեղեցին, որի գմբեթի մեջ ապաստան էր գտել սարսափահար Յուսուֆը: Նրանցից մեկը (հավանաբար ինքը Հովնանը) բարձրանում է գմբեթը և տեղն ու տեղը նիզակահար անելով՝ սպանում Յուսուֆին:

«Մասունցի Դավթի» պատմական առանցքն են կազմում 7—10 դարերում Հայաստանում տեղի ունեցած վերոհիշյալ անցուղարձերը, մաս-

նավորապես հարկահանությունը և վերջինիս պատճառով՝ հայ ժողովրդի և հատկապես Սասունի ու հարևան դավառների աշխատավոր դյուղացիության արարական խալիֆաթի և նրա կեղեքիչ ոստիկանների դեմ մղած հերոսական կռիվներն ու ազատազրական ապստամբությունները :

Ինչպես պատմության, այնպես էլ վեպի մեջ, Բաղդադի խալիֆը կամ նրան պատմականորեն փոխարինած՝ Մսրա Մելիքը իբ հարկահաններն է ուղարկում Սասուն յոթ տարվա հարկը բերելու .

«Էլլալ, Մսրա Մելիֆ օխտը մարդ ցամբեց,  
Սասց.— իմ խարջ օխտը տարի կա, չեմ տվեր,  
Օխտը ուղտի բեռ ոսկի է,  
Օխտը ուղտի բեռ արծաթ .

Քառսուն ագապ աղջիկ էլ արմաղան .

Քառսուն կարն կնիկ՝ երկանֆ աղան .

Քառսուն անծին երինջ մատաղ :

Քառսուն բուղա—աջառ լծկան» :

Ա. 1) 346

---

1) «Սասնա ծռեր» Ա. հատոր, Երևան, 1936 թ.

Սակայն ինչպես պատմութեան մեջ, նույն-  
պես և վեպում, հարկահանները միշտ չէ, որ  
կարողանում են կատարել իրենց արված հանձ-  
նարարութիւնը: Դավիթը պատուհասում է նը-  
րանց և ձեռնունայն հետ վերադարձնում.

«... Դավիթն էլ խերստտեց, կայնալ,  
Ջչափ էգար Կոզբադնի նակատ.  
Կոզբադնի պոկտեր կտրեց,  
Ատամներ լե քաշեց, բվռնեց նակատ, աասց.  
— Գնա՛, ջուհափ տար քու Մըբրա Մելիին,  
Ինչ կանի, քըլի անի»:

Վեպի մեջ արձագանք է գտել նաև արաբ  
ոստիկաններէից մեկի կողմից՝ Մարութա վանքն  
ալերելու և վանքի միաբաններին կոտորելու՝  
վերևում հիշված պատմական միջադեպը: Մորա  
Մելիքը լսելով, որ Դավիթը վերանորոգել է  
Մարութա վանքը, ուղարկում է Կողբադնին  
(Խորբաշուն), որպեսզի դնա և քանդի այն:

Եվ ինչպես որ պատմութեան մեջ Սասունի  
դյուղացիութիւնը անպատիժ չի թողնում վան-  
քըն ալերող և միաբաններին կոտորող ոստիկա-

ներն, ապստամբելով և դուրս վնդելով նրան Մատուռից, այդպես էլ վեպում Դավիթը Մարութա վանքի ամերման բոթն առնելուն պես՝ հետապնդում է Կողբաղներն և բռնելով նրան՝ սպառուհասում :

Այս անգամ մեծ զորքով Մատուռի վրա է գալիս ինքը՝ Մարա Մելիքը (Բաղդադի խալիֆան) .

«Մըսրա Մելիֆ ժողվեց իր կոշուն,  
էկավ Լեռա դաշտ-Բաթմանա ջրու վերին :  
Էնու կոշուն Էնֆան էր,  
Որ գետու վըրեն առաջի եկողը ջուր խմավ,  
Խմելով՝ գետ կըտրավ,  
Ցածի մարդիկ առանց ջուր մնացին :  
Ջուղաք տվեց Դավթին,  
Թե՛ «Բու հողն էրա, ես եկա»

Ա. 351

Դավիթը մեն-մենակ կովի է դուրս գալիս նրա դեմ : Պատերազմը վերջանում է Դավթի հաղթանակով, որը թրի մի հարվածով ոչնչաց-

նում է քառասուն դոմշի կաշու, քառասուն ջրա-  
ղացի քարի տակ թաքնված թշնամուն.

«Դավիթ գնաց, եկավ,  
Հիշեց զՄարութա Բանձրիկ Աստվարածին,  
Խաչ պատերազմին, ինչ որ իր աջ թևին,  
Զուր մեկ թուր էգար.  
Որ էգար, զփառսուն գոմշի կաշին կտրեց,  
Քառսուն ջաղջի ֆար լե կտրեց,  
Մըսրա Մելիֆի գլխու գագաթ լե կտրեց»:

### Ա. 31

Մելիքի՛ մեծ զորքով Սասունի վրա արշա-  
վելու, Դավթի հետ մենամարտելու և նրա ձեռ-  
քով սպանվելու այս պատմությունները հիշեց-  
նում են Սասունից հալածված պատմական երկու  
հարկահանների (Աբուսեթ և Մուսե) փոխարեն՝  
ապստամբ Ժողովրդին հնազանդեցնելու և երկի-  
րը կողոպտելու նպատակով, ամիրապետի կող-  
մից Հայաստան ուղարկված Յուսուֆ ոստիկանի  
դեմ Սուլթեցի մշակների ապստամբությունը և  
նրա (Յուսուֆի) սպանությունը Հովնանի ձեռ-  
քով:

«Սասունցի Դավթի» մեջ պատմական երանդ  
ունենն ոչ միայն կարևոր դեպքերը — վիպական  
միջադեպերը, այլև գործող անձերից մի քանի-  
սը: Վեպի կենտրոնական դեմքը՝ Սասունցի Դա-  
վիթը, Մորա Մելիքի դեմ մղած իր հերոսա-  
մարտով հիշեցնում է Յուսուֆի դեմ Սասունի  
ժողովրդական ապստամբութեան դեկամար՝  
Խուֆեցի Հովնանին: Ճիշտ է, Դավիթը չի կրում  
Հովնան անունը, բայց վերջինս մնացել է վեպի  
մեջ, կապվելով Դավթի կյանքի ու գործի մաս-  
նակից, նրա հորեղբոր՝ Ձենով Հովանի անվան  
հետ: Ժողովրդական վեպի մեջ նման «տեղա-  
շարժեր» հազվադեպ չեն:

Վեպի պատմական երկրորդ կարևոր դեմքը՝  
Քեռի Թորոսն է, որ վիպական արձագանքն է  
արաբների ներխուժման դեմ հայ ժողովրդի զին-  
ված դիմադրությունները ղլխավորող պատմա-  
կան Թեոդորոս Ռշտունսու: Այնուհետև պետք է  
հիշել Դավթի ոսոխ Բաղդադի խալիֆին: Վեր-  
ջինս վեպի մեջ կրում է նույն անունը և կատա-  
րում միևնույն դերը, ինչ որ իրականում:

Այսպես, պատումներից մեկի մեջ նա մեծ

դորքով գալիս է Հայաստանի վրա, կոտորում,  
դերեվարում ժողովրդին.

«Բաղդադի իսլիֆեն շատ գոր ու գորընդեղ  
կ'եղնի,

Ասֆար կենի, կը գա վեր մեր ազգին.

Շատ գմեր ազգ կը նվազցուլ,  
Ու շատ գերի կը բռնի, տանի»:

Բ. 1) 7

Մի այլ տեղ հրամայում է իր մարդկանց,  
ինչ դնով էլ լինի, բերել հայոց թաղալորի  
աղջկան՝ գեղեցկուհի Մովինարին:

Խալիֆեն ասաց.

«Հա՛, ասֆար, ասֆար էրեֆ, գնացեֆ,  
Աղջիկը կը տա, կըտա, չի տա՝  
Քար ֆաղեցեֆ, ավագ մաղեցեֆ.  
ժողվեցեֆ, բերեֆ՝ ինչ կա»:

Ա. 309

«Մասունցի Դավթի» թեման (պատմական  
ատաղձը) արարական տիրապետութեան դեմ հայ

1) «Մասնա ծներ» ք. հատոր (տակավին անտիպ):

Ժողովրդի մղած ազատագրական պայքարը լինելով, նրա դադարիարական բովանդակությունն են կազմում՝ հայրենասիրության, ժողովրդասիրության, ազդային համերաշխության ու խաղաղասիրության մոտիվները: Ահա թե ինչու՝ վեպը մեալով Հայաստանի արաբական տիրապետության շրջանի պատմա-դեղարվեստական մի հուշարձան, իր էությամբ ընդգրկում է հայ ժողովրդի ողջ սրտամությունը:

Առաջին և ամենահիմնական դադարիարը, որ կարմիր թելի նման անցնում է «Սասունցի Դավթի» բոլոր պատումներով՝ դա հայրենասիրությունն է, հայրենիքի պաշտպանությունը: Այդ դադարի կենդանի մարմնավորումներն ու կրողներն են վեպի գլխավոր հերոսները:

Ո՞րն է այդ հայրենիքը և ի՞նչով է այն նվիրական Դավթի և մյուսների համար:

Սասնա Ծռերի հայրենիքը («խերանական երկիրը») Սասունն է (ի մա Հայաստանը), պատմական Հայաստանի հարավային դավառներից մեկը, որ հայտնի է եղել իր լեռնային անառիկ դիրքով և հերոսական ու ըմբոստ ժողովրդով: Այստեղ են ծնվում, քրտինք թափում

և կատարում իրենց սխրապարծությունները վե-  
սկի գլխավոր հերոսները: Սասունը սիրելի ու  
նվիրական է նրանց համար, որովհետև՝

1. Այն խլված չէ ուրիշից բռնությամբ,  
այլ հիմնադրված է իրենց իսկ կողմից՝ քրոնա-  
ջան նշխատանքի և բնության տարերքի դեմ  
մղված անդուլ պայքարի զնով (հիշենք՝ Սասնա  
բերդի հիմնադրման պատմությունը):

2. Այնտեղ ապրում է վեսկի հերոսներին հա-  
րազատ ժողովուրդը, որին սրաշտպանում և հո-  
վանավորում են նրանք (հիշենք՝ Սանասարի ու  
Բաղդասարի, Մեծ Մհերի հոլատարությունը  
Սասունցոց նկատմամբ):

Սասնա Ծռերի սերը դեպի իրենց հայրենիքը  
սերտորեն զուգորդված է նրանց դեպի իրենց  
ժողովուրդն ունեցած ջերմ սիրո հետ: Դրա ա-  
ռաջին փայլուն օրինակը ցույց է տալիս նրանց  
նախնին—հայոց Գաղիկ թագավորի աղջիկը՝ դե-  
ղեցկուհի Ծովինարը: Երբ Բաղդադի իսալիֆան  
նրան տիրանալու նպատակով սպառնալիք է ու-

ղարկում Գաղիկին, Ծովինարը ինքնակամ որոշում է զոհաբերել իրեն՝ հանուն հայրենիքի ու ժողովրդի: Նա մտածում է՝

«Որ չեքքամ,

Իմ հոր երկիր քար քաղեն, ավագ տի մաղեն.

Ես մեկ ջան եմ, եքքամ կորսվիմ լավ է,

Քանց իմ հոր երկիր ավերի:

Ծովինար խոսք հտու»: U. 309

Ծովինարի օրինակին են հետևում նրա երկու դյուցազուն զավակները՝ Սանասարն ու Բաղդասարը: Իրենց մոր նման, նրանք անձնականը ստորադասում են հասարակականին: Սանասար բերդի շինությունը կիսատ թողնելով՝ Սանասարն ու Բաղդասարը մեծ հողատարությամբ ձեռնարկում են բերդի շուրջը ապաստան փնտրող ընչազուրկ մարդկանց համար բնակարաններ շինելու գործին:

Հայրենասեր և ժողովրդասեր հերոս է նաև Մեծ Մհերը: Իմանալով, որ Սասունում տիրող թանգության պատճառը իր երկիրը հարևան հայաշատ վայրերի հետ կապող ճանապարհին լույս ընկած առյուծն է, որին ոչ ոք չի համարձակվում մոտենալ, Մհերը, անձնազոհաբար, գոտե-

մարտում է նրա հետ և սպանելով նրան՝ վեր-  
կում իր հայրենակիցներին վերահաս սովից :

Սակայն, հայրենասիրությունն ու ժողո-  
վըրդասիրությունը ամենից ավելի ցայտուն  
կերպով հանդես է գալիս վեպի գլխավոր հերո-  
սի, Սասունցի Դավթի մեջ: Իմաստուն ժողո-  
վուրդն իր վեպում տարբեր ձևերով դրսևորում  
է իր հերոսի՝ հայրենի հող ու ջրի և վերջինիս  
վրա ապրող ու բանող աշխատավորության հետ  
ունեցած սերա կապն ու մտերմությունը: Այս  
տեսակետից շատ պերճախոս են Դավթի՝ Մելի-  
քի դեմ կռվի զնալուց առաջ արտասանած հրա-  
ժեշտի հետևյալ երգախառն խոսքերը, որտեղ  
նա սրտաչարժ կերպով մի առ մի «մնաս բարով»  
է ասում թե իր հայրենի «պաղ-պաղ» աղբյուր-  
ներին ու քամիներին և թե իր «բարի դրկիցնե-  
րին», «քույրիկներին» ու «մերիկներին» .

«Ծովասարու պաղ-պաղ ախարներ,  
Մնացե՛ք բարով, բարի մնացե՛ք,  
ես կերթամ կռիվ, կը ծարվնամ՝  
Դու՛ք ինձնից կարոտ մնացե՛ք :

Ծովասարու պաղ-պաղ քամիներ,  
Մնացե՛ք բարով, բարի մնացե՛ք.  
Ես կերթամ կռիվ, կը շոգմամ,—  
Դու՛ք հով մնացե՛ք:

Ով քուրիք, կացե՛ք բարով,  
Ձի քուրուքե՛ն է՛ք էրի.  
Ով մերիք, կացե՛ք բարով,  
Ձի մերուքե՛ն է՛ք էրի.  
Բարի դըրկիցներ՝ կացե՛ք բարով,  
կացե՛ք բարով, մե՛ծ ու պատկով»:

Ա. 194

Սակայն վեպը չի բավականանում Դավթի՛  
իր երկրի ու ժողովրդի հետ ունեցած սերտ կա-  
պը նշելով միայն: Նա տալիս է նաև այն սխրա-  
գործությունները, որ կատարում է Դավթի՛քը իր  
հայրենիքի պաշտպանության և հայրենակիցնե-  
րի ազատագրության համար: Այսպես՝ իրատա-  
տու պատավից լսելով, թե ինչպես Մելիքի հար-  
կահանները բռնությամբ հավաքել և մարազն են  
լցրել յոթ տարվա հարկը, Սասնա կանանց ու  
աղջիկներին, — իրենց տիրոջն «արմաղան» տա-

նելու համար, Դավիթն անմիջապես հասնում է  
դեպքի վայրը՝ պատուհասում հարկահաններին և  
ազատում դերին ու ավարը: Դավիթի զայրույթն  
ու ցասումը հորդում է հեղեղի պես, երբ լսում  
է Մելիքի սպառնալիքը Սասունն ավերելու մա-  
սին: Առանց ժամանակ կորցնելու նա դուրս է  
դալիս իր հայրենիքի թշնամու դեմ և ոչնչաց-  
նում նրան:

Հայրենասիրությունն ու ժողովրդասիրու-  
թյունը սերնդից-սերունդ անցնելով, հաղորդ-  
վում է նաև Սասնա դյուցազուններից ամենա-  
կրասերին՝ Փոքր Մհերին: Իրեն հոր (Դավիթի)  
պապի (Մեծ Մհերի) և ապուպապի (Սանասարի)  
նման Փոքր Մհերը ևս հայրենիքի համար զոհա-  
բերում է անձնականը: Օտարության մեջ լսելով  
կողբադնի թոռների կողմից Սասունին սպառնա-  
ցող վտանգի մասին, Մհերը մոռանում է Հովա-  
նի և նրա կնոջ կողմից իրեն հասցված վիրավո-  
րանքը, և վերադառնալով՝ հայրենիք՝ ոչնչաց-  
նում նրա թշնամիներին:

«Մհերն էր լուսուն էլավ,  
Զուր ձին հեծավ, քշեց գնաց Սասուն».

Տեսալ կոզբաղնի չորս թռուներ եկան :  
Ելալ չորս թռուներն էլ բռնեց, կապեց՝  
Առեց, էրեր հրողբոր մոտ,  
Երկուս փառչմեց դռան էն կողմ, երկուսն էն  
կողմ» :

Ա. 289

«Սասունցի Դավթի» դաղափարական բովան-  
դակութեան երկրորդ հիմնական մտտիւլը, որով  
տողորված է վեպը՝ հատկապես Դավթի ճյու-  
ղը, դա՛ ժողովուրդների համերաշխութեան, եղ-  
բայրութեան և խաղաղասիրութեան մտտիւլն է :  
Օտարերկրյա նվաճողների դեմ մղված ազատա-  
գրական պայքարի բովում ծնված մեր վեպի մեջ  
չկա ազգային ատելութիւն : Վեպը ստեղծող աշ-  
խատավոր ժողովրդի ծոցից դուրս եկած վիպա-  
սանները քաջ գիտակցել են, որ արաբական ար-  
շավանքների ու թալանի կազմակերպողները եղել  
են ո՛չ թե արաբ աշխատավորները, այլ վերջին-  
ներիս թաղավորներն ու իշխանները : Ահա թե  
ինչու, լսելով արաբ զորականի խոսքերը այն  
մասին, որ իրենք Մելիքի կողմից զուռով են

կույլի դաշտ բերված, Դավիթը, իբրև ժողովրդի  
հարազատ զավակ, որի համար թանգ է աշխու-  
տավորների կյանքը՝ անկախ ազդու[թյունից,  
սիրով ունկնդրում է նրան, անմիջապես ընդհա-  
տում է անմեղ մարդկանց կոտորածը, և մենա-  
մարտելով անձամբ Մելիքի հետ՝ սպանում նը-  
րան: Նշանակալից է նաև այն, որ Դավիթը,  
Մելիքին սպանելուց հետո, ժողովրդական հերո-  
սին վայել խաղաղասիրական խոսքերով ճանա-  
պարհ է դնում նրա զինավորներին դեպի իրենց  
տները.

«Դավիթ ձիու գուլիս կը դարձուցի,  
կերթա գորֆի մեջ, կասի.

— Ձեզ ամենուդ իզիմ տվի՝

Մեկ-մեկ ձեր տներ գնացե՛ք,

իմ ջանքիմ ազոթե՛ք էրե՛ք,

իմ խոք-մորն էլ ողորմի տվե՛ք»:

Ա. 436

Արար զորականի իմաստուն խոսքերը պատ-  
դամի դեր են խաղում Դավիթի համար: Իր հե-

տաղա կռիվներում ևս նա հավատարիմ է մնում  
այդ պատգամին և կիրառում այն կյանքում :  
Այսպես օրինակ, երբ Դավիթի վրա արչավի ե-  
կած Բապը Փրենկիի հսկայական բանակը, տես-  
նելով նրա դյուցազնական ուժը, լիախուստի է  
դիմում, Դավիթը համոզում է թշնամու զոր-  
քին՝ կանգ առնել և ցույց տալ իրեն իրենց թա-  
գավորի տեղը, հայտնելով, որ ինքը մտադիր  
չէ նրանց վնասելու : Նա խորհուրդ է տալիս  
նրանց՝ հեռու մնալ նվաճողական կռիվներից,  
ասելով .

«Քանի դու ժիր ե՛ք, կռիվ մի՛ք երթա»

Ա. 455

Միաժամանակ Դավիթը պատվիրում է Բա-  
պը Փրենկիի զինվորներին՝ նեղն ընկնելու դեպ-  
քում, զիմե՛լ իրեն օգնութ՛յանը՝

«Որ դու նեղ կընկնե՛ք,  
Զի թուղթ գրե՛ք, ես կը գամ» :

Ա. 465

«Սասունցի Դավթի», ինչպես և առհասարակ հայ ժողովրդական բանահյուսութեան, հիմնական մոտիվներէրց են նաև՝ աշխատավոր ժողովրդի ձգտումը դեպի ազատութիւնը, նրա բուռն լավատեսութիւնը՝ կապված իր անառիկ ուժի նկատմամբ նրա ունեցած անխախտ հավատքի հետ:

Առաջին մոտիվի լավագույն օրինակը վեպում հանդիսանում է Դավթիթը: Իր ողջ կյանքով ու գործով — դյուցազնական հերոսամարտերով ու սխրագործութիւններով նա ձգտում է դեպի ազատութիւնը և ծառայում դրան: Առանձնապես ցայտուն է այս տեսակետից Մարա Մեւիքի տանը գերութեան մեջ գտնվող Մանուկ Դավթի ելույթը: Երբ Մեւիքն առաջարկում է նրան ի նշան հնազանդութեան անցնել իր թրի տակով, Դավթիթը կտրականապես հրաժարվում է կատարել նրա կամքը, ասելով.

«Կը սպանե, բո՞վ ըսօր սպանե,  
Ես ընդրա թրի տակով չեմ ընցնա.

Հըմայ կենե, օր վաղ ես մեծնամ՝  
Սուր չֆաշե՞մ ուր վըրեն»:

Բ. 19

Երկրորդ մտախփի՝ սեփական ուժի մասին  
ունեցած վստահության բողմաթիւ արտահայ-  
տություններէց ամենաբնորոշը հետեւյալն է: Երբ  
Զենով Հովանը տեսնելով թշնամու ուժը մի պահ  
սրտողողում է, Մհերը նախատում է նրան, ասե-  
լով.

«Հրո՛խպեր, բա մենի Սասնա տնեն չե՞նիք,  
Զէ՞ մենի Սասնա տնեն ենք.

Մենի մեռնեիք մեր գերեզմանի վրա՝

Դուշման չի կարնա գա.

Քշի երթանի, մեր կոխիլն անենիք»

Բ. 44

Դեպի սեփական հայրենիքն ու հարազատ  
ժողովուրդն ունեցած անսահման նվիրվածու-  
թյան, ազատասիրության, անձնազոհ հերոսու-

Թյան, խաղաղասիրության և նման մի քանի  
այլ բարձր հատկությունների ու ձգտում-  
ների համար, «Սասունցի Դավթի» հերոսները,  
մասնավորապես՝ Դավիթը, ջերմորեն սիրված են  
աշխատավոր ժողովրդի կողմից: Իրենց պայքա-  
րի մեջ նրանք գտնում են ժողովրդի պաշտպա-  
նությունն ու օժանդակությունը: Հանձին կորեկի  
արտի տեր աղքատ պառավի, ժողովուրդը բո-  
լոր դժվարին ու ճակատագրական պահերին՝  
օգնության է հասնում Դավթին: Իր իմաստուն  
խորհուրդներով ու հորդորներով պառավ կինը  
ընթացք է տալիս նրա տարերային ուժին: Նա է  
առաջին անգամ հայտնում Դավթին հարկահան-  
ների գալստյան լուրը, նա է սովորեցնում Դավ-  
թին հոր գեներերի տեղը... Ժողովուրդը ուշի-  
ուշով հեռուում է Դավթի և մյուս հերոսների  
սմեն մի քայլին, սրտանց ուրախանում ու ոգե-  
վորվում նրանց հաջողություններով և մտահոգ-  
վում ու տխրում նրանց առաջ ծառայած դժվա-  
րությունների ու պատահած դժբախտություննե-  
րի ժամանակ: Այսպես՝ երբ Մըսըրում ապրող  
սասունցի ջուհակները լսում են, որ Մելիքը  
մտադիր է սպանել Մեծ Մհերի որդիներին՝

Գալթիին և Մանուկին, անմիջապես մարդ են ուղարկում Գեռի Թորոսի մոտ, որպեսզի նա շտապի օգնութեան հասնելու իր աղքականներին:

Մի ուրիշ անգամ, իրենց նախնի՝ Աբամելիքի (= Սանասար) մահվան լուրը լսելով, սասունցիք յոթ տարի սուգ են պահում, յոթ տարի շարունակ չեն ամուսնացնում իրենց տղաներին ու աղջիկներին: Նույն կերպ նրանք սգում են նաև Սասունը սովից փրկող Առյուծաձև Մհերի մահը: Պակաս անկեղծ ու հուզիչ է նաև Շապուհ արքայի քաղաքում բնակվող սասունցի ջուլհակի սուգը՝ դավադրաբար հորը նետված Փոքր Մհերի վրա, որին հանդիպում է ինքը, աղատված Մհերը, Շապուհի քաղաքում ծպտյալ շրջադայելիս:

«էդ տեղե՛ն ելավ (Մհեր), լեկավ քաղքի մեջ:  
Եկավ, տեսավ, որ մեկ ջուլիակ հիմա՛ծ կենեք.  
Հիմա՛ծ կենեք ու կիլեք:

Հիմա՛ծի կես սև էր, կես սիվտակ էր:

Ու հարցուց թե՛, — Հո՞րի մեկ սև կը հիմնիս, մեկ սիվտակ

Ու կիլաւս հետ :

Գործըրար ըսեց, — Եւ Սաաունա եմ,  
Մհերին բռնին, քալին հորու մեջ,  
էն արով մեկ սև կը հինեմ, մեկ փիտակ,  
Ու կիլամ» :

Բ . 99

«Սասունցի Դավիթ»-ը հայ ժողովրդի անմահ ստեղծագործութիւնն է : Նրա մեջ պայծառությամբ ու թափով արտահայտված են մեր ժողովրդի ազատասիրական ոգին ու հերոսականութիւնը, նրա անդուլ պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ : Դավիթի հայրենասիրութիւնը, սերը դեպի ժողովուրդը, անասան կամքը, նրա բացառիկ խիզախութիւնն ու քաջութիւնը այսօր էլ խորապես հուզում են մեզ :



Հայկի և Բեկի առասպելը, Արտաշեսի վեպը, Արշակի, Վասակի և այլոց զրույցները, «Սասունցի Դավիթ» դրուցադնամակը՝ ուշագրավ

ստեղծագործություններ են ո՛չ միայն իրենց բովանդակությամբ՝ դադարաբաշխ մոտիվներով, այլև արվեստով՝ արտահայտչական միջոցներով: Վերջիններս բղխում են այդ ստեղծագործությունների ներքին էությունից և ծառայում են այդ էության առավել հաջող ու գունեղ դրսևորման գործին:

Հայ ժողովրդական հերոսապատումների մեջ օգտագործված արտահայտչական միջոցները վերցված են հայկական բանահյուսության բազմադարյան հարուստ դանձարանից:

Այդ արտահայտչական միջոցներն են.

1. Հարուստ սյուժեի: Պատմական-իրական միջադեպերը, պատերազմական գործողությունները, հերոսների շինարարական գործունեության նկարագիրը. միահյուսված ու զուգորդված են առասպելական-հեքյաթային, կենցաղային և այլ մոտիվների հետ: (Այս տեսակետից հատկապես աչքի են ընկնում Արտաշեսի վեպը և «Սասունցի Դավիթը»):

2. Կուռ ու կոփ կոմպոզիցիան: Ավելորդաբանություններ, ձգձգված կոորդներ չկան: Վիպական սուանձին մոտիվներն ու մոմենտները

օրդանապես մերված, ձուլված են իրար հետ և իրար մեջ: (Այդպես են անխտիր խնդրո առարկա բոլոր հերոսապատումները):

3. Ուժեղ ինտրիգները: Կան բավականաչափ ուժեղ ինտրիգներ, որոնք լարում և հետաքրքրութիւն են առաջացնում: Այդպիսիք են՝ Հայկի և Բելի մենամարտը, ալանական հորդաների և հռոմեական բանակների անակնկալ հարձակումները, Արչակի և Շապուհի, Վասակի և Շապուհի հանդիպումները, Բաղդադի խալիֆի սպանութիւնը, Դավթի և Մելիքի ընդհարումը, և այլն:

4. Տիպերի ռեալիստական բնութագիրը: Ինչպես դրական, նույնպես և բացասական գործող սննդինք բնութագրված են ռեալիստական դժերով: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն ու ինքնատիպ դեմքը՝ Ֆիդիքական ու հոգեկան բնորոշ առանձնահատկութիւններով: Երբեմն մի քանի խոսքով կամ մի երկու նախադասութեամբ հաջող կերպով տրված է այս կամ այն հերոսի ամբողջական դիմանկարը: Առանձնապես լավ են կերտված՝ Հայկի և Բելի, Արտաշեսի ու Սաթենիկի, Երվանդի ու Սմբատի,

Արշակի, Վասակի ու Շապուհի, Ծովինարի ու Արտատեր Պառավի, Հովանի ու Մելիքի, Դավթի ու Մհերի տիպերը:

5. Հիպերբոլան (չամիագանցություն): Իրենց սիրելի հերոսներին գովերգելու ու իդեալականացնելու, նրանց կատարած սխրագործությունները վառ կերպով ցուցադրելու համար, ժողովրդական բանասացները, իբրև արտահայտչական միջոց, առատորեն կիրառում են հիպերբոլան, տալով դրա միջոցով ժողովրդի ուժի ու հզորության գաղափարը: Հայ ժողովրդական հերոսապատումների մեջ հիպերբոլիկ ձևով են նկարագրված՝ գլխավոր գործող անձինք իրենց անսովոր Փիզիքական ուժով ու խիզախությամբ. նրանք մեն-մենակ կռվում են իրենց անհեղեղ ախոյանների, թշնամու բյուրավոր բանակների, և զանազան դերբնական էակների ու զազանների դեմ և հաղթում նրանց (հիշենք՝ Հայկին, Սըմբատին, Վասակին, Դավթին, Փոքր Մհերին, և այլն):

6. Կոնտրաստը (հակադրություն): Հայ ժողովրդական հերոսապատումների մեջ կողք-կողքի հանդես են բերված լավն ու վատը, չարն

ու բարին, երևակայական-առասպելականն ու  
իրականը: Եթե Հայկը ազատասեր է ու խիզախ,  
Բելը՝ բռնակալ է ու վախկոտ, եթե Արտաշեսը  
քաջ է ու ազնիվ, Երվանդը՝ չար է ու դավա-  
դիր, եթե Մուշեղը շիտակ է ու մեծահոգի,  
Շապուհը՝ նենգ է ու շողոքորթ, եթե Մելիքը  
չար է ու դաժան, ապա Դավիթը՝ բարի է ու  
մեղմ, եթե Վերդոն վախկոտ է ու տմարդի, ա-  
պա Քեռի Թորոսը՝ քաջ է, մեծահոգի, և այլն:  
Հակադրելով իրար դրականն ու բացասականը,  
ժողովրդական բանասացները դրանով իսկ ավելի  
են ընդգծում առաջինի առավելությունները:  
Հակադրությամբ նրանք հասնում են նույն նպա-  
տակին, ինչ և չափազանցությամբ— այն է ժո-  
ղովրդին սիրելի հերոսների գովք ու իդեալա-  
կանացում:

7. Պատկերավորությունը: Հայ ժողովրդա-  
կան հերոսապատումները հարուստ են ինքնա-  
տիպ ու գունեղ, կենդանի ու դինամիկ պատ-  
կերներով ու համեմատություններով, որոնք  
գործ են ածվում տարբեր առիթներով և հիանա-  
լի կերպով բնութագրում են վիպական հերոս-  
ներին ու նրանց արարքները, բացահայտում ժո-

դովրդի վերաբերմունքը՝ վիպական-առասպելա-  
կան հերոսների, պատմված դեպքերի ու դեմքե-  
րի նկատմամբ: Այսպես օրինակ՝

Բնութագրելու համար Բելի ալլանդակ ու  
անձոռնի մարմինը, բանասացները նրան համե-  
մատում են «մսեղեն արձանի» հետ:

Բելի խուժաղուժ ամբոխի անկանոն առաջ-  
խաղացումը նմանեցվում է սարից թափվող հե-  
ղեղին, «որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառի-  
վայր հեղեալ...»

Արտաշեսի արագընթաց ձիարշավը դետի  
միջով, համեմատվում է սրաթև արծվի սլացքի  
հետ.

«Հեծով արի արքայն Արտաշէս ի սեաւն դե-  
ղեցիկ, եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ  
դետն...»

Երվանդի զինվորների վրա Սմբատի կատա-  
րած հերոսական հարձակումը նմանեցվում է  
կաքափների երամի վրա արծվի կատարած  
հուժկու խոյանքին.

«Եւ յառաջեալ զհակառն իւր՝  
Իբրև գարծուի յերամս կաքաւաց խոյանայր»:

Սասունից դատարկաձեռն, և Դավթի կողմից  
սլատուհասված հետ վերադարձող Կողբադինը  
համեմատվում է վազան շան հետ.

«Իդա դիին գացիր. քննց գել գագան,  
Ըն դիեն էկար քննց շուն վագան,  
Մգրադդ է վիգդ քննց շան խառան,  
Բերանդ է բաց քննց սլատուհան,  
Ճաններ վրեն կապած քարվան»:

Խանդուխ խանումի բարեմասնությունները՝  
հասակը, սիրտը, աչքերը... համեմատվում են՝  
լճի եղեգի, լայն հրապարակի, գինու բաժա-  
կի... հետ.

«Էնոր բոյ գյուլու կամիշ մման էր,  
էնոր սրտիկ ֆուռկիկ Ջալալու մեյդամն էր,  
էնոր աչքեր գիմու կթխա էր...»

Ա. 918

Խանդուխի գեղեցկության մասին գուսաննե-  
րի գովքը լսելուց հետո, Դավիթն իր ներսում

կատարված հեղաշրջումը տալիս է այսօրինակ  
համեմատություններով.

«Իմ սիրտ քանց Սասնա բերդն ամուր էր,  
Քլունգ առաք, իմ հիմ քանդեցիք.  
Իմ սիրտ քանց աշունգվա գետ գուլալ էր,  
Գարնան սելավի նման պրդտորիք»:

Ա. 284, Բ. 1055

8. Գեղարվեստական նկարագրությունները:  
Ինքնատիպ ու գունեղ պատկերների ու համեմա-  
տությունների հետ, հայ ժողովրդական հերո-  
սապատումները օժտված են նաև գեղարվեստա-  
կան սեղմ ու սքանչելի նկարագրություններով,  
լիբիքական շեղումներով, որոնք դյուլթում են  
իրենց խորությամբ, սեղմությամբ ու գեղեց-  
կությամբ: Այսպես օրինակ.

Դյուլթան Հայկի ամբողջական ու կլասիկ  
պատկերը դժված է ընդամենը մեկ նախադասու-  
թյամբ. «Հգօր զօրութեամբ եւ բարի անձամբ,  
եւ կորովի աղեղամբ եւ մարտիկ յոյժ»:

Նույն կերպ տրված է և Բեւլի դիմանկարը.

«Հսկայ որսորդ, ճոխն չատուլածացեալ, հզօր  
դօրութեամբ եւ սարտիկ յոյժ դեղ պարանոցի  
լւրոյ»:

Օտարութեան մեջ մեռնող հայրենաբաղձ  
Աբտաշեսի կարոտի նկարագիրը տրված է այս-  
օրինակ լիբիքական շնչով.

«Օ՛ տայր ինձ գծուլս ծխանի.  
Եւ գառաւօտըն նավասարդի,  
Զվագելն եղանց եւ զվագելն եղջերուաց.  
Մեք փող հարուաք եւ քմբկի հարկանէաք,  
Որպէս օրէն է քագաւորաց»:

Գարնանային բնութեան ամբողջական նկա-  
րագիրը «Սասունցի Դավթի» մեջ տրված է ըն-  
դամենը մեկ նախադասութեամբ՝

«Ժամանակ գարուն էր,  
Սար հագար ծաղկունքով,  
Ավելուկով լեցուկ էր»:

9. Մակդիրներն ու ածականները: Կենդանի  
ու գունեղ մակդիրների ու ածականների միջո-

ցով ժողովրդական բանասացներն ու գուսանները պատկերավոր ու գեղեցիկ կերպով բնութագրել են իրենց ստեղծագործություններում երեւիւն եկող մարդկանց, իրերի ու առարկաների արտաքին ու ներքին հատկանիշները: Այսպես օրինակ.

Հայկ դյուցազնի մակդիրներն են՝ «ուշիմ», «բարի», «բաջազանդուր», «խայտակն», «հաստաբազուկ»: Բելլինը՝ «հանդուզն», «անձոռնի»: Արտաշեսինը՝ «արի», Սաթենիկինը՝ «աչազեղ», Շապուհին՝ «վարազ», Վահանինը՝ «գայլ», Մհերինը՝ «առյուծաձև», Հովանինը՝ «ձենով», Դավթինը՝ «թառլան», Դավթի թրինը՝ «կայծակի» և այլն, և այլն:

10. Հանգիստութեան և կրկնավորութեան: Հայ ժողովրդական հերոսապատումների մեջ բաւական առատորեն կիրառւած են նաև հանգիստութեան և կրկնավորութեան կոչված արտահայտչական միջոցները: Առանձին վիպական հատվածների մեջ (հատկապես չափածո կտորներում) կրկնվում են առանձին հնչյուններ, բառեր, տողեր, — հնի հետ նոր բառեր ու իմաստներ ավելացնելով: Կրկնությունների այս ձևը

բանաստեղծութեանը հաղորդում է նկատելի ե-  
րաժշտականութիւն, միաժամանակ առաջ բե-  
րելով դորժողութեան աստիճանական առաջադի-  
մութիւն: Բնորոշ են այս տեսակետից՝

Արտաշեսի և Սաթենիկի հարսանեկան հան-  
դեսի նկարագրութեան հետեյալ հատվածը.

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշէսի,  
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն

Սաթենիկան»:

Արտաշեսի անեծքը՝ ուղղված իր Արտա-  
վազդ որդուն.

«Եթէ դու յորս հեծցես  
յԱգառն ի վեր ի Մաաիս,  
Զքեզ կալցին քաջք,  
Տարցին յԱգառն ի վեր ի Մաաիս»:

Դավթի խնդիրքը՝ ուղղված իր հորեղբորը,  
ափերված վանքը վերանորոգելու համար վար-  
պետներ վարձելու մասին.

«Տո՛, խըրոխպե՛ր, մեռնիմ քի, խըրոխպե՛ր,  
Տու կընդի ձի քառսուն սարակ .

Տո՛, խըրոխպե՛ր, մեռնիմ քի, խըրոխպե՛ր,  
Ձի քենե պետն ի քառսուն ուստա .

Տո՛, խըրոխպե՛ր, մեռնիմ քի, խըրոխպե՛ր,  
Ձի քենե պետն ի քառսուն քար տվող . . . »

*Ձենով Հովանի կանչը վարպետներին հավաքելու համար .*

«Ա՛խ, տի կանչիմ՝ տի քան,

Ա՛խ, տի կանչիմ՝ տի քան .

Ա՛խ, քառսուն հագար քամալնի,

Ա՛խ, քառսուն հագար քամալնի :

Ա՛խ, տի կանչիմ՝ տի քան .

Ա՛խ, տի կանչիմ՝ տի քան .

Ա՛խ, քառսուն հագար ուստա,

Ա՛խ, քառսուն հագար ուստա» և այլն :

11. Լեզուն ու ոճը : Հայ ժողովրդական հե-  
րոսապատումների լեզուն կենդանի ու պարզ է,  
ոճը՝ սահուն ու ճկուն, համեմված ժողովրդա-  
կան սրամիտ ու դիպուկ առած-ասածված քնե-

րով, անեծք-օրհնանքներով, որոնք հաղեցված են կենցաղային, պատմական, սոցիալական խորը բովանդակութեամբ:

12. Տաղաչափությունը: Հայ ժողովրդական հերոսապատումների (չափածո հատվածների) ուսանավորը համապատասխանում է այդ հերոսապատումների բովանդակութեանը: Դա՛ ազատ, հանդարտ ու հանդիսավոր, միաժամանակ՝ սխիզմիկ ու բազմազան մի չափ է, որ հիանալի կերպով զրսևորում է խնդրո առարկա ստեղծագործութեանների հերոսական-դյուցազնական բնավորութեանը, հարուստ ու բազմազան սյուժեն:



Հայ ժողովրդի հերոսական տրագիցիաները, որոնք այնքա՛ն խորը հեռքեր են թողել նրա բազմազարյան բանահյուսութեան մեջ, նոր թափով ու նորոգ սպով զրսևորվում են գերմանական գավթիչների դեմ Սովետական Միութեան ժողովուրդների մղած հայրենական մեծ պատերազմի այս ահեղ օրերին: Թե թեև իրենց ավագ

ու կրտսեր եղբայրների՝ հերոսական ուսու-  
ցողութիւն և Միութեան մյուս ազգություններին  
հետ, հայ ժողովրդի լավագույն զավակները  
խիզախորեն մարտնչում են գերմանական զրա-  
հապատ վիշապների դեմ, ցույց տալով անձնա-  
զոհութեան ու քաջութեան մեկը մյուսից փայ-  
լուն օրինակներ:

Չի անցնի շատ ժամանակ և բանաստեղծ  
հայ ժողովուրդը՝ հանձին իր տաղանդավոր  
բանասացների ու գուսանների, օգտագործելով  
իր վարպետ պապերի ստեղծագործական մեծ  
փորձը, կհյուսի նորանոր վեպեր ու երգեր, իր  
նոր, դյուցազնազարմ Հայկերի, Մաքատների,  
Մուշեղների, Վահանների, Առյուծաձև Մհերնե-  
րի ու Սասունցի Դավիթների մասին:

---

Պատ. խմբագիր՝

Խ. Ս. Ս ա Ր Գ Ս Յ Ա Ն

ՎՖ 1846. Պատվեր 226. Տիրած 3000.

Տպագրական 5,5 մամ. Մեկ մամ. 17250

նշան. Հեղինակային 2 մամ. Ստորագրված է

տպագրութեան 16/IV—42 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0042111

[174]

203

ԳՆԸ 1 Բ. 70 Կ.



**Ա. ԳԱՆԱԼԱՆՅԱՆ**  
**Երոզիեսնո սնազանն**  
**արյանսկոյո արոզո**  
(Ու արյանսկոյո յանս)  
Արյան, Երոզան, 1942 թ.